Ե· ՏԱՐԻ 1494   Թ·Ն· ՀԱՅՈՑ 4380   ՔԱՂՈՑ 16   ՇԱԲԱԹ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1888   (Ն· Տ·) 5 ՅՈՒՆՈՒԱՐ 1889   2 ՃԷՄԱԶԻՒԼ ԷՎՎԷԼ 1306

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

غلطه‌ده نورادونكيان خانده (ارهولك)
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	160
»	Վեցամսեայ	80
»	Եռամսեայ	40
Գաւառաց	Տարեկան	200
»	Վեցամսեայ	100
Օտար երկիրներէ տարեկան ֆրանք		56
» »	վեցամսեայ	28

[illegible] Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1888

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՊԱՇՏՕՆԱԽՈՅՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հայրն իւր պաշտօնավարութեան առաջին օրէն հռչակեց [illegible] գաւառաց վիճակին անմիջական դարման տանելու ստիպողական պէտքն, և անկեղծօրէն յայտարարեց թէ Կ. Պոլսոյ մէջ հաւաքեալ եկեղեցականաց թիւը չափազանց կը գտնէ. Բայց այս կէտին երեւոյթը նոյն պատճառ ունի՞ն, ա՛ն է՝ կարգ մը եկեղեցականաց գաւառային պաշտօններէ խոյս տալը. Ն. Ամենապատուութիւն ձեռնարկեց ի գործ դնել կանոն մը, զոր նախորդ Պատրիարքունք ևս հռչակած էին, բայց գործադրութեան մասին այնչափ հոգ չէր տարուած. այս է՝ Մայրաքաղաքիս մէջ պաշտօն չտալ ո՛ և է եկեղեցականի որ ժողովրդային ընտրութեամբ կամ Պատրիարքարանի տնօրինութեամբ գաւառային պաշտօնի մը կը կոչուի ու չերթար. Կը ցաւինք որ Գեր. Տ. Հմայեակ Եպիսկոպոսի պէս խելահաս և բանիբուն եկեղեցական մը, յորմէ լաւագոյն բաներ կրնային սպասուիլ, տեղի տուած է այս խիստ բայց արդար կանոնին իւր վրայ գործադրման. Ընթերցողք գիտեն թէ Ենի-Գափուի քարոզիչ Տ. Հմայեակ Եպիսկոպոս Ռոտոսթոյի առաջնորդական տեղապահութեան կոչուեցաւ, և չգնաց, կարգ մը առարկութիւններ ընելով, զորս մեր երեկի թուով հրատարակեալ նամակաւն ալ պարզած էր. Ս. Պատրիարք Հայրն և Կրօնական Ժողով բանաւոր չգտան այդ առարկութիւններ, և Տ. Հմայեակ Եպիսկոպոս, իբրեւ Պատրիարքարանի տնօրինութեան անհնազանդ եկեղեցական մը, պաշտօնանկ եղաւ Ենի-Գափուի քարոզչութենէն, որ ուրիշի մը յանձնուեցաւ. Ն. Գերապատուութիւն կը յօժարի իբրեւ այցելու հովիւ ասիական գաւառներն երթալ. կը յօժարի ստանձնել Ագրիանուպոլսոյ և Ռոտոսթոյի վիճակաց առաջնորդութիւնն, եթէ միացուին, եւ նմանապէս կ'ընդունի Պուլկարիոյ եւ Ռումանիոյ Հայոց հովուութիւնն, եթէ իրեն յանձնուի. Բայց Ռոտոսթոյի առաջնորդական տեղապահութիւնը չընդունիր, և այս պաշտօնին դէմ իւր դժկամակութիւն ա՛յնչափ մեծ է որ Ս. Պատրիարք Հօր պաշտօնական եւ առանձինն ամեն յանձնարարութիւնք չեն ազդեր իրեն. Տ. Հմայեակ Եպիսկոպոսի այս տարօրինակ ընթացքը նախ սա ընդհանուր խնդիրը կը յարուցանէ թէ եկեղեցական մը իւր կոչուած պաշտօնին պէտք երթայ թէ իւր ուզած պաշտօնին. Այս խնդիրն այսպէս առաջարկել՝ զայն լուծել ըսել է արդէն. Ամեն ազգի, ամեն եկեղեցւոյ մէջ եկեղեցականք մէկու մը հնազանդութեան պարտաւոր են. Կաթողիկոսական հրաման, Պատրիարքարանի տնօրինութիւն կամ ժողովրդային ընտրութիւն մեր մէջ այն օրինական ոյժերն են որոց եկեղեցականք պարտին հնազանդիլ. Եթէ Տ. Հմայեակ Եպիսկոպոսի լռելեայն յատագուած սկզբունքն ընդունուի, Եկեղեցւոյ մէջ բնաւ կարգ կանոն չի մնար. Ամեն եկեղեցականներ ալ Ենի-Գափուի նախորդ քարոզչին պէս կրնան իրենց նախընտրած այս կամ այն պաշտօնը խնդրել, փոխանակ այն պաշտօններու որոց կոչուին ժողովրդային ընտրութեամբ կամ Պատրիարքարանի տնօրինութեամբ. Այսպիսի սկզբունք մը անիշխանութիւն կը մուծանէ Ազգին մէջ, և անշուշտ դատապարտելի է.

Բայց եթէ թողունք սկզբունքի ընդհանուր խնդիրն, և գործին մասնաւոր պարագայները քննենք, ա՛լ աւելի անարդարանալի կը գտնենք Տ. Հմայեակ Եպիսկոպոսին պահանջումը. Եւ իրօք, չէ մոռցուած թէ գաւառային պաշտօններ ընդունելու ինքզինք միշտ պատրաստ ցուցնող այս Եպիսկոպոսն ինքն էր որ յաջորդաբար հրաժարեցաւ Մշոյ, Տիգրանակերտի և Կարնոյ առաջնորդական պաշտօններէն. Չէ մոռցուած թէ Եկեղեաց գաւառին կլիմայն իւր առողջութեան յարմար գտաւ ա՛յնչափ ժամանակ միայն որչափ պէտք էր Երզնկայի վիճակին վրայ Եպիսկոպոս ձեռնադրուելու համար, և թէ, յԵպիսկոպոսութիւն բարձրանալուն պէս, իսկոյն պատճառներ գտաւ հրաժարելու Երզնկայի առաջնորդութենէն. Նաև, կը ներէ՞ Ենի-Գափուի նախորդ քարոզիչն եթէ հարցունենք իրեն թէ այն փափուկ կազմուածն որ Ռոտոսթոյի մեղմ օդին չի տանիր, ի՞նչպէս կը տանի արեւելեան հայաբնակ գաւառաց կլիմային, որոց այցելու հովուութիւնն ընդունելու պատրաստականութիւն կը ցուցնէ. Կը ներէ՞ արդեօք եթէ հարցունենք նաեւ թէ ի՞նչպէս կը համարձակի Ռումանիոյ և Պուլկարիոյ հովուութեան թեկնածու լինել, երբ գիտէ թէ այս պաշտօն եւրոպական գո՛նէ մէկ լեզուի ծանօթութիւն կը պահանջէ, մինչ ի չորս իւր բազմաթիւ ձիրքերուն՝ օտար լեզուագիտութիւնը փայլուն տեղ մը չի բռներ.

Տ. Հմայեակ Եպիսկոպոս հալածեալի մը վշտալի դերը կ'առնու՝ հանրային խիղճ գրգռելու համար, բայց կարծենք թէ այս մասին հասարակաց միտքն իւր դատաստանը տուած է արդէն. Կը հարցունէ թէ ինչո՞ւ համար զինք կը ստիպեն գաւառային պաշտօն ստանձնելու, երբ Կրօնական Ժողովոյ անդամք խոյս կուտան գաւառային պաշտօններէ. Բայց տարակոյս չկայ թէ երբ Տ. Հմայեակ Եպիսկոպոս ինք գլխաւոր անդամ և ատենապետ մ'էր Կրօն. Ժողովոյ, իւր ընթացքէն հետեւող եկեղեցականները չէր կրնար հարկադրել գաւառային պաշտօններ ընդունելու, հետեւապէս պաշտօնախոյս եկեղեցականք կը բազմանային Կ. Պոլսոյ մէջ. Եթէ Տ. Հմայեակ Եպիսկոպոսի առարկութիւնը բանաւոր նկատենք, ո՞չ ապաքէն գաւառային պաշտօնի կոչուած ամեն եկեղեցական նոյն առարկութեան կրնայ ապաստանիլ, իրեն պէս պաշտօնէ խոյս տալու համար. Սկզբնաւորութիւն մ'ընել պէտք էր, և դիպուածն այնպէս բերաւ որ սկզբնաւորութիւնն Երզնկայի նախորդ Առաջնորդին վրայ լինի. Եթէ իւր Ազգին և Եկեղեցւոյն անձնուէր ծառայ մ'է Տ. Հմայեակ Եպիսկոպոս, ինչպէս կ'ըսէ, կը վայլէր որ հնազանդէր Ս. Պատրիարք Հօր և Կրօնական Ժողովոյ կրկնակի յանձնարարութեանց, և հնազանդութեան և անձնուիրութեան գեղեցիկ օրինակ մը տալով, ճամբայ բանար իրեն չափ կամ իրմէ նուազ պաշտօնախոյս եկեղեցականաց՝ մէկ մէկ գաւառային պաշտօն ընդունելու. Կը ցաւինք որ այսպէս չըրաւ, և ինքզինք շատ ձախող դիրքի մը մէջ թողուց. Չենք յուսար որ այդ դիրքին մէջ ժողովրդեան ո՛ և է մասին կողմէ համակրանք գտնէ. Երբ Ս. Պատրիարք Հայրը խնդրոյ մը մէջ արդար խստութիւն կը ցուցնէ, պէտք է փոխարէնն աջակցութիւն գտնէ ժողովրդէն. Սահմանադրական Ազգի մը մէջ ա՛յս է միակ բանաւոր միջոց զեղծումներն արմատախիլ ընելու. Պէտք է որ ժողովուրդն իւր ընթացքով հասկցնէ Ենի-Գափուի նախորդ քարոզչին թէ եպիսկոպոսական աստիճանի հասնելու համար քիչ մը ժամանակ Երզնկայի Առաջնորդութիւնը վարելով և անմիջապէս Կ. Պոլիս վերադառնալով՝ գաւառաց մէջ ծառայելու պարտականութիւնն ըստ բաւականին չէ կատարած, իւր եկեղեցական անձնուիրութիւնն ըստ բաւականին չէ ապացուցած, և քանի քանի անգամներ իրեն առաջարկուած պաշտօններէ խոյս տալովն ալ ազգային իշխանութեան դէմ ըմբոստ գտնուած է, այնպէս որ Կ. Պոլսոյ Թաղի մը քարոզչութենէն զրկումն իրեն համար ծանր պատիժ մը չէ՛. Այսպիսի պաշտօնախոյս եկեղեցականներն և ո՛չ իսկ հարսանեաց և ննջեցելոց հանդէսներու պէտք է կոչել. Արդար խստութեան քանի մը օրինակներ կը բաւեն. զանցառու եկեղեցականք իրենք իրենց կ'ուղղուին, երբ զԱզգն և ազգային իշխանութիւնն հաւասարապէս իրենց դէմ տեսնեն.

Գաղափարաց նոյն կարգին մէջ, գովելի կը գտնենք Ս. Պատրիարք Հօր տնօրինութիւնն, որով այսօր կամ վաղը Կ. Պոլսէ կը հեռանայ (եթէ արդէն չէ հեռացած) ուրիշ եկեղեցական մը, որ վարքն ու բարքը ժամանակէ մ'ի վեր ո՛չ նուազ գայթակղութիւն պատճառած են Մայրաքաղաքիս այլ և այլ թաղերու մէջ. Պէտք չունինք նորէն և նորէն հաւաստելու Ամեն. Ս. Պատրիարք Հօր թէ այս ուղղութեամբ իւր ցոյց տալիք ամենայն խստութիւն կը համապատասխանէ ողջամիտ հասարակութեան բաղձանաց, և թէ կարեւորն ա՛յն է որ Ն. Ամենապատուութիւն չթուլնայ, ո՛ և է մասնաւոր նկատման առջեւ չտկարանայ, և Ազգէն, Եկեղեցիէն և Տէրութենէն առած իշխանութիւնն ամենայն անաչառութեամբ ի գործ դնէ ամեն կարգի՝ մեծ և փոքր՝ զանցառու եկեղեցականաց դէմ.

⁂

ՔՍԱՆ ՈՒ ՀԻՆԳ ՏԱՐԻ ԵՒ ՔՍԱՆ ՈՒ ՀԻՆԳ ՂՐՈՒՇ

Ազգին եկեղեցական դասուն չափ հոգածութեան արժանի է վարժապետական դասն. Հայկաբանութեան բազմաշխատ ուսուցչի մը, Մանավեան Տիգրան էֆէնտիի մահուան առթիւ, դամբանական արտասանող Սրբազանն յիշեցուց թէ քսան և հինգ տարիէ հետէ Ազգին ծառայող այս մարդուն գրպանէն քսան եւ հինգ ղրուշ միայն ելած է յետ մահուան. Երբ այսչափ անտոյգ և խեղճ է վարժապետական դասուն կեանքն, ի՞նչ կրնանք սպասել մեր վարժարաններէն. Մեր համակրելի աշխատակիցն, որ «Հրանդ» գրական անուան ներքեւ [illegible] հաւատօրէն, լրագրոյս դեկտ. 19ի երկուշաբթի աւուր թուով զգայուն գրչաւ մը գծեց Մանավեանի կենաց հարազատ պատկերն. Ազգին այս փաստակարեկ աշխատաւորը թողած է այրի մը և վեց անչափահաս որբեր, հանրային գթութեան կարօտ վիճակի մը մէջ. Ուրախութեամբ կը լսենք թէ հանգանակութիւն մը բացուած է՝ քանի մը տարի չափաւոր ամսական մը կապելու համար այս թշուառ ընտանեաց. Որովհետեւ հանգուցեալն երկար տարիներ ծառայած էր Հիւանդանոցի վարժարանին, իւր որբերէն մի քանին հոն պիտի կրնան ընդունուիլ, և Հիւանդանոցի ընդհանուր համարակալ էֆէնտին ալ գլուխ կանգնած է բացուած հանգանակութեան. Բաղձալեբերով այս շարժումը, կը փափաքէինք միանգամայն որ վարժապետաց հանգստեան սնտուկի գաղափարն այս առթիւ նորոգուէր, և գործնական ձեւ մը առնուր. Ամեն երկրի մէջ փորձուած և գործնական և արդիւնաւոր գտնուած դրութիւն մ'է այս. Վարժապետք իրենց ամսականէն փոքր մաս մը, 100էն 3 կամ 5, կը թողուն վստահելի ձեռքերու մէջ գտնուող հանգստեան սնտուկի մը, յորմէ կը խնամուին անկար վարժապետք և չքաւոր մեռած վարժապետներու ընտանիքներն, հանգստեան սնտուկ որ իբրեւ բարեգործական հաստատութիւն մը կ'ընդունի նուէրներ, կտակներ, և այլն. Աւասիկ արդիւնաւոր գաղափար մը, զոր Ուսումնական Խորհրդոյ մեծայարգ Ատենապետին՝ Տրթ. Թիրեաքեան էֆէնտիի մտադրութեան կը յանձնարարենք. Ինք Կ. Պոլսոյ վարժապետական դասուն քով բաւական համարում կը վայլէ՝ իւր անձնական հեղինակութեամբ այս գաղափարն ի գործ դնելու համար, և կարող է այսու թանկագին ծառայութիւն մը մատուցանել, ապահովելով այն ուսուցչական դասուն ապագան, որուն կարողագոյն մէկ անդամն էր երբեմն ինքն ալ, Տրթ. Թիրեաքեան էֆէնտին.

⁂

ԹԱՂԱՅԻՆ ՎԻՃԱԿ ԽԱՍԳԻՒՂԻ

Լրագրոյս մէջ վերջին ժամանակներս երեւցած այլ և այլ հրատարակութիւններէ իմացած են ընթերցողք թէ թաղային իշխանութեան և կրթութեան կողմէ շատ խեղճ վիճակ մ'ունի Խասգիւղ, որ ա՛յնչափ փառաւոր անցեալ մ'ունեցեր է. Այս սիւնակաց մէջ անցեալներն հրատարակուեցաւ Խասգիւղէ ազդու նամակ մը, որ ստիպողաբար կը պահանջէր Ներսէսեան վարժարանին վերաշինութիւնն, յոյժ մթին գոյներու տակ նկարագրելով այդ հաստատութեան նիւթական ու բարոյական վիճակն. Այս միջոցիս թաղային իշխանութիւնը վերակազմելու և գործունէութեան նոր ճամբու մը մէջ դնելու ջանքեր կը լինին. Նոր Թաղական Խորհրդոյ մ'ընտրութիւնն սկսած է, չորս անդամք ընտրուած են, և մնացեալ հինգ անդամոց ընտրութիւնն ալ վաղը պիտի կատարի. Մեծագոյն քուէն ստացած և ժողովրդեան ձայնիւ Նոր Թաղական Խորհրդոյն Ատենապետութեան կոչուած է Եղիա էֆէնտի Շահպազեան. Այս անձ ծանօթ է Արեւելքի ընթերցողաց, Զուլիչ Տիգրանի դատին առթիւ գործուած ծանր սխալի մը առթիւ, որուն համար Պատրիարքարանը պատիժ մը տնօրինեց՝ Շահպազեան էֆէնտին և իւր պաշտօնակիցներն երեք տարի ազգային պաշտօններէ զրկելով. Այս բաները ժամանակին գրած և մանաւանդ Շահպազեան էֆէնտիի ընթացքը խստիւ քննադատած ենք. Բայց քանի որ այն իշխանութիւնն որ ազգային շրջանակի մէջ պատիժներ տալու իրաւունքն ունի, իւր ներելու անժխտելի իրաւունքն ևս ի գործ դնելով, պատժոյն մնացեալ մասը ներած է անոնց, և քանի որ Եղիա էֆէնտի Շահպազեան ազգային այլ և այլ գործերու մէջ և ի մասնաւորի Խասգիւղի մէջ օգտակարապէս պաշտօն վարած և արդիւնք ցուցած մարդ մ'է, իւր այս ընտրութեան առթիւ բան մը չունինք ըսել, բայց եթէ մաղթել որ անիշխանութեան ցաւալի վիճակի մը մէջ Խասգիւղի թաղական պաշտօնն ընդունելով, և անձնուիրապէս աշխատելով, իւր վրայ դրուած ակնկալութիւնները պսակէ, և ցաւալի անցեալ մը յիշատակն ազգօգուտ գործերով բոլորովին մոռցնէ. Վերաշինել Ներսէսեան վարժարանն, ահա՛ փառաւոր նպատակակէտ մը. Խասգիւղցիք ընտրած են Շահպազեան էֆէնտին ա՛ն յուսով թէ գիւղին այս մեծ պէտքը լրացնելու համար ունի հարկաւոր նախաձեռնութիւնն և գործունէութիւնը. Կը յուսանք թէ Շահպազեան էֆէնտիի խիղճն հանգարտ չի թողուր զինք, մինչեւ որ իւր գիւղին այս մեծ պէտքը չյաջողի լրացնել՝ աջակցութեամբ իւր նոր և հին պաշտօնակցաց, համայն թաղեցւոց և կրթասէր բարերարաց Ազգին.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

Յունուար 1ին Վիեննայի Կայսեր նախագահութեան ներքեւ պատերազմական մեծ խորհուրդ մը տեղի ունեցաւ, որուն ներկայ էին Գահաժառանգ Ռուտոլֆ Իշխան, Ալպրէխթ եւ Վիլհէլմ Արքիդուքսերը, պատերազմական նախարարն և երեւելի զօրապետք աւստրիական և հունգարական բանակաց.

—Վիլհէլմ Բ. Կայսր հեռագրաւ շատ սիրալիր կերպիւ շնորհաւորեց Ումպէրթօ Թագաւորն Ամանորի առթիւ, ըսելով թէ այն գեղեցիկ աւուրք զորս Իտալիա անցուցած է՝ երբեք չպիտի ջնջուին իւր յիշողութենէն.

—Խարթումէ եկած Ցոյն մը, որ երկու ամիս առաջ հոն կը գտնուէր, լուր բերած է ի Սուաքին թէ Էմին փաշային և հասարակածային գաւառաց գերի ինկալուն նկատմամբ մինչև երկու ամիս առաջ բնաւ լուր չկար Խարթումի մէջ. Ընդհակառակն կը գրուցուէր թէ Սուտանցիք երկիցս պարտութեան մատնուած են Պահր-էլ Ղազէլի կողմը.

—Հանգուցեալ Ալֆոնսօ Թագաւորին քոյր Իզապէլլա իշխանուհւոյն կառքը շրջելով ջախջախեցաւ, բայց իշխանուհին չվիրաւորեցաւ.

—Բանակին փոխադրութեանց [illegible] համար Ռուսիոյ պատերազմական նախարարութիւնը 18 նոր գումարտակներ կազմել որոշեր է, որք պատերազմի ժամանակ 18 նոր վաշտերու պիտի վերածուին.

—Հոլլանտայի Թագաւորին հիւանդութիւնը ծանրացեր է.

—Նորագոյն հեռագրեր կը հաստատեն արդէն հեռագրուած այն լուրը թէ Օսման Տիկմայի գլխաւոր նեցուկն եղող Հատէնտովայք իրմէ բաժնուելով, անգլեւեգիպտական կառավարութեան հաւատարիմ մնալու յանձնառու եղեր և այսպէս ապստամբութենէ հրաժարեր են բոլորովին.

—Բրուսիոյ կառավարութիւնն յառաջ կը տանի բրուսիական Լեհաստանի գերմանացումն, որուն համար փորձած միջոցներէն մին, որ է հարաւային Գերման երկրագործ գիւղացւոց մեծ գաղթականութեան մը ներմուծումն ի Փոզէն, յաջող արդիւնք կուտայ եղեր.

—Ամերիկացի կաթոլիկ եպիսկոպոսունք շնորհակալեաց գիր ղրկեցին Պապին՝ Ուաշինկթոնի մէջ կաթոլիկ Համալսարանի մը հաստատման նպաստելուն համար. Այս նպատակաւ արդէն չորս միլիոն ֆր. հաւաքուեր է. Շէնքն ալ աւարտելու վրայ է.

—Հանրածանօթ անգլիացի իրաւագէտ, դասախօս, երեսփոխան և արտաքին գործոց նախորդ խորհրդական Պ. Ճէյմս Պրայս այս օրերս հրատարակեց «Ամերիկեան Հանրապետութիւն» (The American Commonwealth) անուամբ եռահատոր մեծ գիրք մը, որ մեծապէս կը գնահատուի անգլիա-

---

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԲՐԱՏՈՅԻ ԳԼԽԱՏՈՒՄԸ

Բրատոյի,—Մարի Ակէդանի համբաւաւոր սպանչին գլխատումը տեղի ունեցաւ դեկտեմբեր 28ի առաւօտուն ի Բարիզ Ռօքէդի հրապարակին վրայ. Դատական պաշտօնագրոց կապոցն, որ քանի մը օրէ ի վեր Հանրապետութեան նախագահին ձեռաց մէջ կը գտնուէր, դեկտեմբեր 27ի առաւօտուն ղրկուեցաւ դատական գործոց նախարարին, ուսկից յանձնուեցաւ ընդհանուր դատախազին, որում տրուած է գլխատմանց պաշտօնը.

Պ. Գառնօ, գործին մանրակրկիտ քննութենէն յետոյ, հարկ չէր դատած այս պարագայիս մէջ գործածել իւր ներման իրաւունքը.

Ընդհանուր դատախազ Պ. Պուշէ փութաց նախագահական որոշումն հաղորդել ոստիկանութեան վերատեսչին և դահճին, Պ. Տէյպլէրի. Ըստ սովորութեան, ծանուցին Պ. Տէյպլէի որ հարկ եղած պատրաստութիւնները տեսնէ, որպէս զի Բրատոյի գլխատումը տեղի ունենայ յաջորդ առաւօտ. Հրամանն այսպէս խմբագրուած էր.

Փրանսական հանրապետութիւն.

«Յանուն օրինաց, հրամայուած է եղեռնական վճռագրոց գործադրիչին որ առնու Լինսքա տը Գաստիյէրն անձն, անուանեալն Բրատօ, ի մահ դատապարտեալ Սէնի եղեռնադատ ատենէն 1888 նոյեմբեր 14ին, և ձեռնարկել նորա գլխատման հրապարակաւ 1888 դեկտ. 28 ին, առաւօտեան ժամ 7 ու կէսին.

«Բարիզ, 27 դեկտ. 1888.

«Ընդհանուր դատախազ,

«ՊՈՒՇԷ»

Գլխատման լուրը շուտով տարածուած էր բովանդակ Բարիզի մէջ. Սակայն, Ռօքէդի հրապարակին վրայ, հասարակութիւնը բաղդատաբար քիչ էր. Ինչո՞ւ. Պատճառն ա՛յն էր որ նախորդ գիշերներն յաջորդաբար ընդունայն սպասած էին, գլխատման ուշ ժամանա՞կն կամ օդին սաստիկ ցրտութի՞ւնը. Ինչ որ ալ ըլլայ, այս տեսակ տեսարանաց սովորական յաճախորդներուն մեծագոյն մասը չէ ուզած գալ գիշերն ի բուն դողդղալ Ռօքէդի հրապարակին վրայ.

Ժամ ճիշդ չորս ու կէսին, երկու կառքեր, մին կառափնարանին տախտակները եւ միւսը՝ գլխատելոյն դիակին փոխադրութեան կողովները բարձած, կը հասնին հրապարակն եւ կը կանգնին բանտին պատին տակ. Օգնականներն անմիջապէս գործի կ'սկսին, քանի մը լապտերներու լոյսով. Պ. Տէյպլէ կը հսկէ մեքենային լարուելուն վրայ. Կտոր կտոր, օգնականները կը կանգնեցնեն կիյոթինին կտորներն եւ կը պատշաճեցնեն զայնս.

Ժամ հինգին, Ռօքէդի բանտին տնօրէնին սենեակին պատուհանները կը լուսաւորուին.

Ժամ հինգը քառորդ անցած, կիյոթինն կանգնած է հրապարակին վրայ, և Պ. Տէյպլէ ապահով կը լինի թէ ամեն բան կարգին է և թէ դանակը լաւ կը սահի փայտին փորուածքին մէջ. Քանի մը անգամ կը խաղցնէ զսպանակը, մինչդեռ իր օգնականներէն մին չուանին կը կախուի՝ արգիլելու համար որ դանակը շատ ուժգնութեամբ չիջնէ և չթնդայ. Ցետոյ, իր քննութենէն գոհ, կը շրջագայի սպասելով դատաւորաց.

Վերջապէս, ժամ եօթնին, Հանրապետութեան նախագահը նշան մը կ'ընէ եւ Պ. Պառօն, թաղին ոստիկանապետը, Պ. Գոպէ, պետ թաղապետական ոստիկանութեան, Պ. Ա. Կոռօն, պետ Հանրային ապահովութեան, եւ միւս պաշտօնակալք բանտը կը մտնեն. Դրան առջեւ իրենց կը միանայ բանտին տնօրէն Պ. Պօքէն. Իրենց առջեւէն կ'երթան երկու տասնապետք, որոց մին կ'առնու քաթանակը, ի հարկին գործածելու համար եթէ մահապարտն ընդդիմութիւն ընէ.

Մահապարտը կը քնանայ բռունցքը գոց, երբ այսպէս կը հասնին իր խուցը. Ալմուկէն կ'արթննայ, անկողնին մէջ կ'ելնէ կը նստի, չորս դին պտտցնելով ապշութեան նայուածքներ.

—Քաջ եղիր, կ'ըսէ նմա Պ. Պօքէն. Վճռաբեկ ատեանը մերժեց ձեր խնդրագիրն եւ Հանրապետութեան նախագահը չընդունեց ներման աղերսագիրը. Քաւութեան վայրկեանն հասած է.

—Քաւութի՛ւն. ի՞նչ պիտի քաւեմ. Ես անմե՛ղ եմ, կը գոչէ Բրատօ. Այսուհանդերձ պատրաստ եմ. Սակայն փաստաբանս կանխաւ ծանուցանելու էր ինձ. Տնօրինութիւններ ձեռք պիտի առնուի՝ զաւկիս ապագայն ապահովելու համար.

Առաջին անգամն էր որ Բրատօ զաւկին անունը կ'արտասանէր. Երկու ոստիկանք նմա կուտան իր գուլպաները. Արտորնօք կը հագուի, աջակցութեամբ երկուց օգնականաց, առանց խօսք մը արտասանելու. Ցետոյ կ'երթայ դէպի փոքր սեղան մը, գդալը կը բռնայ, քանի մը ձեռագիր թերթեր կը հանէ անոր և կտոր կտոր կը պատռէ զայնս.

Երէցը կը յառաջանայ և կը մատուցանէ նմա իր միջնորդութիւնը.

—Աւելորդ է, կ'ըսէ Բրատօ.

—Կ'ուզէ՞ք բան մը խմել.

—Դուք խմեցէք եթէ կ'ուզէք, կը պատասխանէ. Դուք ինձմէ աւելի յուզուած էք, կը յարէ, իբրեւ թէ ինքնիրեն խօսելով.

Վերջապէս, դէպի ապահովութեան պետին դառնալով, այսպէս կը խօսի նմա.

—Պ. Կոռօն, իմ վերջին բարեւներս հաղորդեցէք հարցաքննիչ դատաւորին Պ. Կիյեօի, որ կառափնարան ղրկեց զիս.

Ապա, ուժեղ ձայնով մը որ բնաւ յուզում չէր յայտներ, կը գոչէ.

—Կը բողոքե՛մ, ես անմե՛ղ եմ. Ես չսպանեցի Մարի Ակէդանը, կ'երդնում զաւկիս գլխուն վրայ.

Վերջապէս կը տանին զինքն արձանագրութեանց սենեակն, ուր կ'սպասեն նմա Պ. Տէյպլէ եւ իր օգնականները. Հոն է որ տեղի կ'ունենայ մահապարտին արդուզարդը.

Դահիճն եւ իր օգնականներն իրենց գրպանէն կը հանեն չուանի տրցակներ, եւ կ'սկսին կապել մահապարտը. Պ. Տէյպլէի օգնականներն հանգոյցներով կը շրջապատեն ծունկերը, որով փոքր քայլերով միայն կրնայ քալել. Ցետոյ սաստկութեամբ ետ կը տանին արմուկներն եւ իրարու կը կապեն.

Դահիճը մկրատ մը կ'առնու և բծախնդրութեամբ կը կտրէ կը պատռէ Բրատոյի շապիկին օձիքը. Օգնականները կը բռնեն անոր թեւերէն, մինչդեռ Պ. Տէյպլէ կ'երթայ դէպի տոմարն որուն վրայ քարտուղարը գրած է հետեւեալ յիշատակութիւնը.

«1888 տարւոյն դեկտեմբերի 28ին առաւօտեան ժամ 7. 25ին, սոյն կալանաւորեալ Լինսքա տը Գաստիյեան անձն, անուանեալ Բրատօ, յանձնուեցաւ եղեռնական վճռոց գործադրիչին՝ համաձայն Պ. ընդհանուր դատախազին դեկտ. 27 թուակիր հրամանագրոյն.»

Պ. Տէյպլէ կը դնէ իւր ստորագրութիւնն այս յայտարարութեան ներքեւ.

Կը հարցնեն Բրատոյի թէ յայտնութիւններ ունի՞ ընելիք. բացասական պատասխան կուտայ.

Ռօքէդի հրապարակին վրայ ամբոխը կ'սպասէ անձկութեամբ. Յանկարծ ոստիկանութեան պետը կը հրամայէ թուր ի ձեռին առնուլ. Միանգամայն Ռօքէդի ծանր դրան երկու դռները կը դառնան իրենց ծխնիներուն վրայ, և մահաշուք թափօրը կ'երեւի. ճիշդ ժամ եօթնուկէսին է.

Պ. Տէյպլէ առջեւէն կը քալէ. Իրեն ետեւէն կը յառաջանայ մահապարտն. Ա-

ներուն վրայ փոքր վերարկու մը կը նետեն. Բրատօ չափազանց գունատ է եւ կորաքամակ կը քալէ, գլուխն ուսերուն մէջ խրած. Օգնականներէն մին բռնած է զինքն. Իւր ձախ կողմէն կը քալէ բանտին երէցը, Թեօ Աբբայն. Բրատօ կը մրմնայ սա խօսքերը.

—Այնչափ կապած են զիս որ չեմ կրնար քալել. Չորս կողմս կը ցուցնէ.

Նայուածք մը կը պտտցնէ ոստիկաններուն, զինուորներուն եւ ներկայից վրայ. Կառափնարանին առջեւ հասած է ան. Յանկարծ գլուխը վեր կ'առնու եւ դանակին կը նայի. Կարծես կը մաքնիսանայ այս տեսքէն.

Երէցը կը մօտենայ նմա. Բրատօ ետ կը մղէ զինքը.

Պ. Տէյպլէ յանկարծ կը բռնէ զինքն և տախտակին վրայ կը նետէ. Օգնականներէն մին գլուխը կը բռնէ ականջներէն եւ ճեղքուածքին տակ կը քաշէ, մինչդեռ իր պաշտօնակիցներէն մին մահապարտին ոտուըները բռնած է. Պ. Տէյպլէ կոճակ մը կը կոխէ և դանակը կ'իյնայ ու կը կտրէ Բրատոյի գլուխը. Արեան մեծ ցայտ մը կը ժայթքէ և կ'ողողէ կիյոթինը. Մարմինը կը գլորի կողովին մէջ, գլուխը կը նետուի տաշտին մէջ. Երկու կողովներն ալ կը դրուին կառքին մէջ որ արշաւասոյր կ'ընթանայ դէպի Իվրիի գերեզմանատունը. Կառքին ճամբուն վրայ, ամբոխը կը պոռայ և կը սուլէ.

Բրատօ գլխատումէն առաջ վերջին և բացորոշ կամք յայտնած լինելով, բժշկական վարժարանը չղրկուելու, իր մարմինը չյանձնուեցաւ բժշկաց.

կան մամուլին մէջ։ Այս հեղինակութեամբ Գ. Ճէյմս Պրայս մանրամասնօրէն կը քննէ Միացեալ Նահանգաց քաղաքական, տնտեսական և ընկերական կազմակերպութիւնն ու հաստատութիւնները։ Առաջին հատորը մասնաւորապէս իրաւագիտաց, երկրորդ հատորը քաղաքագիտաց և երրորդ հատորն ընդհանուր հասարակութեան համար շատ հետաքրքիր [illegible] կը պարունակեն, և յոյժ կը պարզեն ամերիկեան կեանքն իր ամեն կողմերով։

—Ռումանիոյ գրագէտ Թագուհին անգլիերէն ու գերմաներէն բերթուածի վերածեց Ռումանաց ազգային երգերէն հաւաքածոյ մը, զոր ի մօտոյ ի լոյս պիտի ածէ։ Եղիզաբէթ Թագուհին (Քարմէն Սիլվա) գրական անուան ներքև ֆրանսերէն բազմաթիւ գրական գործեր [illegible], իր այդ գործով ալ ռումաներէն, անգլիերէն և գերմաներէն լեզուաց խորին հմտութիւն ցոյց կուտայ։ Հաւանօրէն առաջին [illegible] է այս որ անգլիերէն բերթուածներու հաւաքածոյ մը կը հրատարակէ, և անտարակոյս առաջին [illegible] Թագուհին է այդ լեզուաւ հրատարակութիւն մ'ընող։

—Գ. Կլատսթոն այս օրերս 80 րդ տարին թևակոխեց, և այս առթիւ բազմաթիւ շնորհաւորութիւններ ընդունեց մանաւանդ Իտալիայէն։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ադրիանուպոլսոյ վանուց վանահայր Արժ. Եղիշէ Վարդապետ, որ ինչպէս կը յիշէք, Ազգ. Կեդր. Վարչութեան որոշմամբ Տիգրանակերտի առաջնորդական տեղապահ կարգուած էր, հեռագիր մը ուղղելով ի Պատրիարքարան ծանուցած է թէ ճանապարհ ելած է իր նոր պաշտօնավայրին՝ Տիգրանակերտ երթալու համար։

Թոփգաբուի [illegible] թաղից Աղքատախնամ ընկերութեան ի նպաստ [illegible] տրուած թատերական ներկայացման հաշիւն հաղորդուած է մեզ Կարապետ Մանուկեան կողմէ։ Այդ հաշուեցոյցէ կ'երևի թէ յիշեալ ներկայացման ամբողջ [illegible] գումարն է 8322 դր. և զանազան նուիրատուութիւններէ՝ 489 դրուշ. ընդ ամենը 8811 դրուշ, յորմէ զեղչելով ընդհանուր ծախքն, 3263 դր. զուտ հասոյթ մնացած է 5548 դրուշի գումար մը, որ 510 դրուշն [illegible]։

Գ. Գ. Աղաւնեան յօրինակին առթիւ արուեստք թատերական ներկայացման շքեղ ու փառաւոր ընծայելու համար [illegible] պատրաստութիւնք կը տեսնուին։ Տոմսակներն, որք [illegible] վրայ են, կը գտնուին [illegible] խմբագրատունը։

Բարեկեր Տիկինէ մը ստացանք մեկ օսմ. ոսկի ի նպաստ [illegible] մայրապետին։

ՀԱՅԿ ԷՖ. ԱՐՇԱԿԵԱՆ

ՈՐԴԻ

ՄԵԾ. ՅԱԿՈԲ ԷՖ. ԱՐՇԱԿԵԱՆԻ

[illegible] հիւանդութենէ կնքեց իր մահկանացուն ի հասակի 21 ծաղիկ ամաց, ի խոր և յանմխիթար սուգ թողլով իր սիրելի ծնողքն, հարազատ ազգականքն և բարեկամները։

Թաղման արարողութիւնն պիտի կատարուի վաղը, Կիրակի, ի ժամ 6 ի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ Պէշիկթաշի, ուր պիտի փոխադրուի հանգուցելոյն մարմինն և անտի պիտի ամփոփուի իր նախնեաց դամբարանին [illegible]։ Ասոր կը հրաւիրուին ազգականք և բարեկամք ներկայ գտնուիլ այս տխուր հանդիսին։

Պէշիկթաշ, 24 դեկտ. 1888

ԱԶԴ

Ս. Կարապետ Եկեղեցւոյ [illegible] Թաղականութիւնս [illegible] (Ս. [illegible] Եկեղեցւոյ կից [illegible]) 11 և 13 թիւ 7 կանգուն երեսով և 15 կանգուն 4 մատ խորութեամբ ընդամենն 106 կանգուն 4 մատ գետնոյն [illegible] համար 31 օրեայ [illegible] առաջին [illegible] 182 ոսկ. [illegible]։

Աղդ՝ [illegible] յառաջիկայ 22՝ [illegible] առաւօտը պիտի կատարուի Ս. Կարապետ և Ս. [illegible] Եկեղեցեաց Թաղ. Խորհրդարանաց մէջ։

Այս [illegible] առաջարկուած [illegible] 100 ին 5 [illegible]։

1889 յունուար 22 ին՝ կիրակի օր ի ժամ 6, Թաղականութիւնս Ս. [illegible] Եկեղեցւոյ Թաղական Խորհրդարանին մէջ երկրորդ [illegible] պիտի [illegible] իր վերջնական գնորդին։

20 դեկտեմբեր 1888 2525

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿՈՒԱՆ ՍԵԼԱՄԼԸՔԸ

Սելամլըքի արարողութիւնը սովորական շքով տեղի ունեցաւ երէկ Համիտիէ մզկիթին մէջ։ Ճէպր Հիւմայուն պաշտօնատան մէջ կը գտնուէին [illegible] Իսմայիլ փաշայի [illegible], Մահմուտ փաշա և [illegible] զօրավարներ։

Սելամլըքի արարողութենէն յետոյ Մահմուտ փաշա կայս. պալատ գնաց և արժանացաւ Վեհ. Սուլթանի [illegible]։

ԲԱԹՈՒՄԻ ՏՈՒՐՔ

Բ. Դուռը վերջերս սուր [illegible] շրջաբերական գիր մ'ուղղելով ծանուցած էր թէ Բաթումի տուրքն պիտի [illegible]։ Արդ, այս շրջաբերական գիր հաղորդուած է նոյն [illegible] արտաքին գործոց նախարարութեանց և կ'ըսուի թէ պատասխանները մէկ քանի օրէն պիտի հասնին։

ՆՈՐ ԿՇԻՌ

Թագաւորութեան Ա. [illegible] հաշուակալ Մեհմետ էֆէնտին նոր կշիռ մը հնարած, զոր Ուսումնական նախարարութիւն և Թագաւորութիւն ընդունելի գտած են, Վեհ. Սուլթանին մատուցեր է։ Ն. Վեհափառութիւն իր բարձր գոհունակութիւնը յայտնելով [illegible] շքանշան մը շնորհած է Մեհմետ էֆէնտիին։

ԴԱՐՍԻՄԻ ԳԱՒԱՌԸ

Դարսիմի երևելիներէն ու անդամ [illegible] ժողովոյ անդամներէն Պասրի աղէ, Խալիլ աղէ և Միհթապ և [illegible] էֆէնտիներն մայրաքաղաք գալով Բ. Դրան մատուցած են հանրագիր մը, որով կը խնդրեն Դարսիմի գաւառ, որ առաջ նահանգ ըլլալով [illegible] վերածուած էր, դարձեալ նահանգի և եթէ կարելի չէ ինքնուրոյն կառավարութեան վերածել։

[illegible] կ'իմանայ թէ Բ. Դուռը նկատողութեան առնլով այս խնդիրը խորհրդակցութիւններ կը կատարէ։

ԿԱՅՍ. ՏՆՕՐՀ

Յունաց Պատրիարքարանի թերթը՝ Եկեղեցական [illegible] կ'ըսէ թէ Վեհ. Սուլթանին կայսերական [illegible] Պատրիարքարանին շնորհեալ գումարն ո՛չ թէ 1000, այլ 2000 օսմ. ոսկի է։ Ամեն. Տ. Դիոնեսիոս Պատրիարքը շնորհակալ կայս. պալատ գնաց Սինոդին և խառն ժողովին շնորհակալիքը մատուցանելու համար յատուկ կայս. [illegible]։

ՀԱՅԴԱՐ-ՓԱՇԱՅԻ ԴԻՄԸ

[illegible] կը ծանուցանէ թէ Հայտար Փաշա-[illegible] երկաթուղին [illegible] կարգադրուած է։ Կայս. կառավարութեան [illegible] շուրջ մէկ միլիոն ֆրանքի գումար [illegible], որ Գ. Գ. [illegible] և [illegible] վերաբերեալ գիծը պիտի յանձնեն [illegible]։

Գ. ԿՐՈՒՀՈԼՑ

Արեւելեան երկաթուղեաց [illegible] տնօրէն Գ. Կրաուհոլց որ [illegible] համար Գ. [illegible] ու Վահէ. [illegible] էֆէնտիի [illegible] բանակցութեանց, [illegible] նոր [illegible] մը ստացած ըլլալով, Բարիզ գացեր է ուր պիտի մնայ [illegible]։

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Լ. Հէկեր մի քանի օրէ ի վեր [illegible] մը կը ընէր թէ Օսմ. կայս. Դիւան և Տէօյչ Պանք դրամատանց բանակցութեան մէջ են ասիական երկաթուղեաց շինութեան գործը [illegible] համար։ Արդ, Գ. [illegible] Ներկայացուցիչ Տէօյչ Պանքի, նամակ մ'ուղղելով [illegible], կը հերքէ կարծեցեալ բանակցութեան վերաբերեալ լուրերը յայտարարելով թէ բոլորովին անհիմն են։

ՖՈԹԻԱՏԵՍ ՓԱՇԱ

[illegible] հեռագիր մը կը ծանուցանէ թէ տեղւոյն դեսպանական մարմինն, [illegible] իր [illegible] օսմ. դեսպան Ֆոթիատես փաշայի, [illegible] շնորհաւորութիւններ մատուցեր է [illegible] և [illegible]։

ԳԱՐԱՏԱՂԻ ԻՇԽԱՆԸ

Անցեալ 13ըդ օր Գարատաղի իշխանին ծննդեան տարեդարձը ըլլալով Չէթինէի մէջ մեծ հանդէսներ կատարուեր են։ Իշխանը իր պալատին մէջ շքեղ հացկերոյթ մը տուեր է։ Հացկերոյթին ներկայ գտնուեր են օսմանեան դեսպան [illegible] փաշա և բոլոր օտար տէրութեանց ներկայացուցիչք։

ՄԱԶՀԱՐ ՓԱՇԱ

Քաղաքապետ Մազհար փաշա մէկ քանի օրէ ի վեր հիւանդ ըլլալով իր պաշտօնատունը չը յաճախեր։

ԼՈՒՑԿԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պօլսոյ, Սելանիկի և Զմիւռնիոյ մէջ լուցկիի գործարան մը հաստատելու համար ընկերութիւն մը կազմուած և կայս. կառավարութենէն մենաշնորհ խնդրուած է։

ԴԱՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Դատական ժողովը նախորդ օր ի նիստ գումարուեցաւ ընդ նախագահութեամբ Դատական նախարար Վսեմ. Ճեվտէթ փաշայի և զբաղեցաւ դատական պաշտօնէից վերաբերեալ խնդիրներով։

Դատական [illegible] յանձնաժողովն եւս նոյն օրն ի նիստ գումարուելով զբաղեցաւ [illegible] և այլ կարեւոր խնդիրներով։

[illegible]

[illegible]

«[illegible]»

ՄՈՆԴԵՊԵԼԼՕ ԿՈՄՍԸ

Կը հաստատեն թէ Ֆրանսական դեսպան Մոնդեպելլօ կոմսն, որ ժամանակէ մ'ի վեր արձակուրդով Փարիզ կը գտնուի, մինչև տասն-հինգ օր մայրաքաղաքս պիտի վերադառնայ։

ՌՈՒՄԵԼԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Ըստ [illegible] Մ'ոնիթէօրի, կայս. կառավարութիւնն հրաժարած է [illegible] Արեւելեան երկաթուղեաց շահագործման ընկերութեան յանձնել [illegible] գիծը։ Կը կարծուի թէ Գ. [illegible] պաշտօնական գիր մը տուած է արդէն այս մասին։

Ուրիշ պաշտօնագիր մ'ալ ուղղուած է [illegible] կառավարութեան, հրաւիրելով զայն հրաժարիլ [illegible] գիծին շահագործումէն զոր կը կատարէ առժամեայ կերպիւ։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ՄԸ

[illegible] մէջ հետևեալը կը կարդանք։

Գ. Ա... Ա... երկու վաճառական ի Պօլիս, [illegible] պատճառաւ [illegible]։ Նախընթաց իրիկուն Լուվրի պանդոկը [illegible] Գ. Ա... [illegible] Գ. Հ... [illegible] Գ. Ա... [illegible] Գ. Ա... [illegible] Գ. Ա... [illegible]

[illegible] Գ. Ա... [illegible] Գ. Ա... [illegible]

Գ. Ա... [illegible]

[illegible] Գ. Ա... [illegible] Գ. Դ... [illegible] յուրում Գ. Ա... կը խօսէր իր անձնասպանութեան խորհրդին վրայ և նամա կը յանձնարարէր իր ընտանիքը։

ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ԳԱՒԱՌԸ

[illegible] թէ Պետական խորհրդոյ [illegible] ընդհանուր դատախազը Նիկոմիդիա [illegible] քննելու համար [illegible] ընդհանուր դատախազին և [illegible] դէմ եղած բողոքները։

Արդ, Նիկոմիդիոյ կառավարիչ Սէլիմ Սըրրը փաշա հեռագիր մ'ուղղելով [illegible], պաշտօնապէս կը ծանուցանէ թէ բողոքներու առիթ տուող [illegible] պատահած չէ ինչպէս պիտի յայտնուի կատարուած քննութեանց արդիւնքէն։

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Սերպիական կառավարութիւնը [illegible] պատուանշանին երկրորդ աստիճանը նուիրած է Մէարիֆի ժողովոյ անդամ Քսենոֆոն Զոգրաֆոս էֆէնտիի։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

Միջերկրականի գերմանական նաւատորմիղը, որ Զմիւռնիոյ նաւահանգիստը կը գտնուէր, նախընթաց օր ճանապարհ ելեր է դէպի [illegible] և [illegible] նաւահանգիստները [illegible] համար։

ԾԱՂԿԱԽՏ

Ադրիանուպոլսէն կը գրեն թէ մի քանի ընտանիքներ վերջին օրերս Ադրիանուպոլիս գաղթեր են, [illegible] համար ծաղկախտէն որ գաւառին այլ և այլ կողմերը ճարակած է։

[illegible] 40 [illegible]

[illegible]

—[illegible] 150ի [illegible]

—[illegible]

—[illegible]

—[illegible]

—[illegible]

—[illegible]

ԱԶԴ

Բ. Ռփ. Տէր Գրիգորեան, բժիշկ և վիրաբոյժ, պատիւ ունի ծանուցանելու յարգոյ հասարակութեան թէ [illegible] է [illegible] էֆէնտի [illegible] հետ։ [illegible], Տէփէ պաշի, 22, [illegible]։ 1—5

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

Այս գիշեր առաջին անգամ ներկայացուի, մեծ պատրաստութեամբ,

ՃՊՈՒՌԸ ԵՒ ՄՐՋԻՒՆ

LA CIGALE ET LA FOURMI

Օփերա-գոմիք չորս արարուածով և ութն պատկերով։

Վաղը ցերեկ, զեղչեալ գներով.

ԼԸ ՓԸԹԻ ՖԱՈՒՍԹ

LE PETIT FAUST

Վաղը գիշեր.

ՔԱՐՄԷՆ—CARMEN

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ՌՕՅԹԷՐ ՀԱՎԱՍ

Լոնտոն, 4 յունուար

Անգլիական լրագիրք կը հրատարակեն [illegible] Սըր Ռ. Մորիեր և Հէրպերդ Ֆոն Պիսմարք [illegible] միջև [illegible] թղթակցութիւն, [illegible] Սըր Ռ. Մորիեր թէ 1870 ին մարաջախտ Պազէնի յայտնած է գերմանական բանակին շարժումները։

Սըր Ռ. Մորիեր [illegible] մարաջախտ Պազէնի [illegible] (1880 [illegible]) [illegible]։ Սըր Ռ. Մորիեր կը խնդրէ [illegible] Հէրպերդ Ֆոն Պիսմարք [illegible]։

Կոմս Հ. Ֆոն Պիսմարք [illegible] թէ Սըր Ռ. Մորիերի [illegible]։

Տէյլի Թէլէկրաֆ կը յայտարարէ թէ [illegible] Սըր Ռ. Մորիերի։

Անգլիական [illegible] լրագիրք նոյն [illegible]։

Բարիզ, 4 յունուար

Զօրավար Պուլանժէ, յունուար 27 ին [illegible]։

Պէլկրատ, 5 յունուար

[illegible]։

(Մասնաւոր Հեռագիր)

Պէլկրատ, 5 յունուար

Այս առաւօտ, ժամ 11 ին, Վեհ. Թագաւորն, [illegible]։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս, 24 դեկտեմբեր
[illegible]

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պարան թուղթ)	110
6 » » » ([illegible])	108 ⁵/₈
3 » Բարիզի » (պարան թուղթ)	22 95
3 » » » ([illegible])	23 02 ½

[illegible]

[illegible]	16 31
[illegible]	16 35
[illegible]	16 25
[illegible]	16 25

[illegible]

[illegible]	41 5
[illegible]	40 25
[illegible]	41 5

[illegible]

[illegible]	Ա. [illegible]	26 30
»	Բ.	5 35
»	Գ.	16 25

[illegible]

[illegible]	4 17
[illegible]	8 22
[illegible]	7
[illegible]	4 28
[illegible]	455
[illegible]	47 ½
[illegible]	125

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 4 Յունվար ժամ 5 վերջ, 15 երկվ.

[illegible]	98 ⁵/₁₆
[illegible]	15 ½
» » » [illegible]	15 ⁵/₁₆
[illegible]	26 ³/₄
[illegible]	15 ³/₈
[illegible]	15 ½
[illegible] 1871	83 ³/₄
[illegible] 1877	95 ³/₄
[illegible]	11 ¼
[illegible] 1873	89 ³/₈
[illegible]	83 ³/₄
» [illegible]	102 ¼
[illegible]	79 ³/₈
[illegible]	101
[illegible] 4 %	— —
[illegible]	25 62½

[illegible], 4 Յունվար ժամ [illegible]

[illegible]	121 15
[illegible]	22 23

Բարիզ, 4 Յունվար ժամ 3 վերջ, 45 երկվ.

[illegible] 4 ½ %	104 65
» 3 %	82 80
[illegible]	15 23
» » [illegible]	15 27 ½
» » [illegible]	15 25
» » [illegible]	15 30
[illegible]	46 75
» [illegible]	492 50
[illegible]	487 50
[illegible]	530
» [illegible]	1363 75
[illegible]	1292 50
[illegible]	2212 50
[illegible] 5 % 1877	104 ¼
[illegible]	97 12 ½
[illegible]	73 ¼
[illegible]	423 50
[illegible]	— —
[illegible] 5 %	440
[illegible]	25 30

[illegible] ՊՈՐՍԱ

[illegible], 4 Յունվար ժ. 10 և 30 [illegible]

[illegible] 3 ½ %	82 81 ½
[illegible]	15 25
[illegible]	423 50

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, 22 դեկտ. 1888

Ձեր լրագրոյ 1888 դեկտ. 21/2 թուականաւ հրատարակեալ թերթին մէջ [illegible] Թոփհանէեան [illegible] թղթակցութիւն մը տեսայ։ Ձեր թղթակիցը [illegible] երկրորդ [illegible] կ'ըսէ [illegible] Անգլիոյ և [illegible]։

Այս առթիւ [illegible]։

[illegible] Տիգրանակերտ [illegible]։

Տիգրանակերտի [illegible]։

Մնամ ձերդ յարգանօք
ՅԱԿՈԲ [illegible]

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ

21. [illegible]

Երկշաբաթաթերթ, [illegible] 1849-1853
[illegible]
[illegible]

[illegible] 7000 [illegible] 50 [illegible] (30 [illegible] 5 [illegible] և 8 [illegible]) 1850 [illegible] (1) [illegible] 1849 ին [illegible] 7 [illegible] 30 [illegible]։

[illegible] (2 [illegible]) [illegible] 15 ին։ [illegible] Ա. [illegible] 1852 [illegible]։

[illegible]

---

(1) [illegible], 1850, թ. 16։

է ոչ մինչոյն բանն ինչ որ Բ——ն——ւ—էն կ'ըլլար. «Ոմանք հրաժարեցան, կ'ըսէ, ի բաժանորդութենէ Ռ——Ժ——ւ—էն, որոց զպատճառն աստանօր յիշատակելն անարժան համարիմք. սակայն սակաւաւուրք յառաջ եւս՝ այլ ոմն ստորագիր հրաժարեցաւ.... Համապատասխանի (էջ՝ Բղծ-կէյ) ոմն՝ զորոյ անունն աստանօր յիշատակելն կարեկցաբար խնայեմք՝ գրէ թէ Տրտմութեամբ գրեմ սակս Ռ——Ժ——ւ—էն, որ տեղս ոչ ով չը հաւանեցան. ուր որ դիմեմ, առանց իմ ոչ ինչ ասել, ասեն որ ոչ ինչ մի բանական և պիտանի լուր չկայ գրած, մանաւանդ որ անցեալ թուումն առեւտրական ոչ ինչ բան չկեր գրած, որով չուզանի (°) գրութիւնքն ամենայն տեղն բանել էր... որպէս քանիցս անգամ գրելամ արդէն որ այդ մասն հատկապէս գրես. Ներկայ տես այդ չգրելովդ տեղւոյս մեր ազնիւքն չատ վնասի են հանդիպման....»

Ռ——Ժ——ւ—էն այսպէս կենաց պայքարի մէջ՝ գոհ իւր 30 էն ոչինչ աւելի բաժանորդաց վրայ կրցաւ ապրիլ մինչեւ 1853. Այս ժամանակներն Աւստրալիոյ Մէլպէօռն քաղաքին մօտերն ոսկւոյ նոր հանքեր գտնուած էին, և Մէլպէօռն գացողներն մեծամեծ դրամոց տէր կ'ըլլային։ Ռ——Ժ——ւ—էն չատ անգամ յորդորեց Հնդկահայ վաճառականներն որ Մէլպէօռն երթան վաճառականութեան համար, մանաւանդ որ Անգղիացի նաւերն Ներքին և գաղտնի դաշնադրութեամբ Հայոց վաճառքներն տանիլ յանձն չէին առնուր։ Եւ երբ տեսաւ որ միտ դնող չկայ, 1853ին Ռ——Ժ——ւ—էն Մայիս 27 թուոյն մէջ գրեց, թէ Ոչ ոք կամի «յետեւիլ մերոցս ազգասէր և բարեմիտ յորդորանաց... ուստի եւ մեք ի սէր ազգիս և յառաջադիմութեան Նորին՝ յուսացեալ ի խնամս և յողորմութիւնս Նախախնամողին մերոյ՝ ստանձնեցաք զայս դժուարին ճանապարհորդութիւն»։ Այսպէս մեր խմբագիրն դադրեցնելով իւր թերթն «... ոչ ի վրդտակութենէ... եւ ոչ յանզգասիրութենէ, տինա և ոչ ի պակասութենէ ծախուց, այլ սակս մեծամեծ օգտից վասն մերոցս սիրելեաց ազգին» մեկնեցաւ գնաց ի Մէլպէօռն ի խնդիր ոսկւոյ, և ո՛ գիտէ թերեւս այսօր միլիոնատէր մ'եղած է մեր երբեմնի խմբագիրն «ի սէր ազգիս և յառաջադիմութեան»։

Հ. Գ. Գ.

(Հանդէս Ամսօրեայ)

ՍԷՐ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

Սիրելն Ապրիլ է

Երեկոյ մը, ի ծոցէյ Քլիւպ, զօրավարն յոյժ տրամադիր կ'երեւէր իւր բարեկամաց հետ խօսակցելու։ Պատմած էր նոյա երբեմն մի քանի դրուագներ իւր զինուորական կեանքէն քաղուած, և այժմ սկսած էր սիրոյ վրայ ճառել։

Ըստ որում մինչ ցայն վայր գրեթէ բնաւ մեր ներկայութեան նա չէր ընտրած իրեն խօսակցութեան նիւթ այդ դոյզն ինչ կնճռոտ խնդիրը, կէս շրջանակ մը ձեւացնելով խմբուեցանք իւր բոլորտիքը և հետաքրքրութենէ շարժեալ ունկն դրինք նմա մեծաւ ուշադրութեամբ։

* * *

«Տեարք, ըստ մեզ՝ ակնարկութիւններ ընելէ վերջ ի մասին ներկայ դարուս երիտասարդութեան թեթեւամտութեան, կենացս մէջ բազում փոփոխութիւններ տեղի ունեցեր են. բազմաթիւ դժբաղդութիւններ կրած եմ, ինչպէս նաեւ անհամար յուսազրկութիւններ ունեցած, բայց երբեք չեմ կորուսած յոյսս, զի ես այն անձերէն եմ որք ամենէ վտանգալից պարագայից մէջ հաստատամտութեամբ կը գոչեն. «Տեղի չը տանք բնաւ և պինդ բռնենք մեր սիրտերը։»

«Եւ արդարեւ, առանց սնապարծութեան, կարեմ հաստատել թէ շնորհիւ միմիայն իմ անձնական կամեցողութեան եւ անսասանելի քաջասրտութեան բարձրացած եմ այսօր այն աստիճանին զոր կը գրաւեմ բանակին մէջ։

«Ցաղթանակներով օժտեալ զօրական մ'եմ ես և այս տիտղոսն ազնուականութեան չափ արժէք ունի։ Քաջ կը ճանչեմ պատերազմի աղէտքն և յաճախ իսկ պատեհութիւն ունեցած եմ մահուան դէմ մաքառելու։

«Արդ թէեւ չարունակ ի վտանգի, և սակայն ինձ չէ պատահած որ քայլ մ'իսկ յետս ընկրկիմ պատերազմի դաշտին վերայ։

«Բայց ի՞նչի կը ծառայեն այս նախաբանքն, պիտի հարցնէք իւրովի։ Գիտենք թէ զօրապետն արիասիրտ անձ մ'է եւ. չենք տարակուսիր բնաւին իւր քաջութեան վրայ։

«Բարէ՛, ազնիւ տեարք, կը սխալիք այդպէս խորհելով, զի եթէ մի կողմանէ զօրապետն ուժգնասիրտ անձ մ'է, միւս կողմանէ վատասիրտ մ'է այն։

«Սիրոյ առջեւ ամօթխած գտնուած է նա, միշտ երկչոտ և տկար, միշտ վախ զգացած է մի կնոջմէ, մի կնոջմէ միայն։ Համառօտիւ ահա եղելութիւնը։

* * *

«Աստ, ի Գաղղիա, երկրորդ կայսրութեան ժամանակ երբ տակաւին կայտառ տեղակալ մ'էի սեւ մազերով և պչրանօք խնամեալ պեխերով, ամէն օր կ'անցնէի մի փողոցէ որ ձեզ ծանօթ է այլ զոր զանց կ'առնեմ ձեզ յիշատակել և ոչ առանց պատճառի. կ'անցնէի մի հոյակապ և ազնուապետական ապարանքի առջեւէ, և միշտ նոյն որոշեալ ժամուն կանոնաւորապէս կը նշմարէի առաջին յարկը, պատուհանի մը ետեւ մի թխամազ օրիորդ, դեռափթթոյ և սիրասուն, նստած անդ անփութօրէն իւր տասնեւութամեայ մեկուսութեամբ և միշտ ի ձեռին կրելով ասեղնագործութիւն մը կամ մի մատեան։

«Շարունակ տեսնելով զնա, վերջապէս սիրահարեցայ նմա։ Հարկ չկայ ըսել թէ չէր այս նման այն բանկած յարդերու որք վայրկեանի մէջ սաստկութեամբ կը փայլին անմիջապէս շիջանելու համար. խորունկ և արմատացեալ սէր մ'էր սա, քանզի նա տիրած է ամբողջ կենացս վրայ և տակաւին կը տիրէ։

«Ամէն անգամ որ կ'անցնէի ապարանքին առջեւէն վեր կը բարձրացնէի գլուխս երկչոտութեամբ ու կը դիտէի դեռատի աղջիկն, այր քնքուշ և փափկանուշ կիսադէմն տակաւ առ տակաւ կատարեալ ճշդութեամբ սիրտս քանդակուիլ մնացս մէջ, այնպէս որ այժմ յետ երեսուն երկար տարիներու, եթէ գիտնայի վրձին ի ձեռին առնուլ և դեղատ (palette) գործածել, ստտ ձեր ներկայութեան պիտի նկարէի իւր կենդանագիրը այնքան ճիշդ որ կարծես բնականին վրայէն նկարուած լինէր։

«Երբեմն դէպ յինձ կը դարձնէր իւր խոշոր աչերն և կը զննէր զիս անտարբերութեամբ։

«Ցայնժամ բոլորովին շուարած, քայլերս կը փութացնէի և մինչ յաջորդ օրն վերջին ծայր կը յոգնեցնէի գլուխս ու կը տանջէի միտքս գտնելու համար մի հնար կարենալ իւր ուշադրութիւնը վրաս հրաւիրելու։

«Եւ ոչ ումեք կը համարձակէի սէրս յայտնել, և այդ իսկ էր պատճառ որ չէի գիտեր ո՛ւմ կը պատկանէր սոյն ապարանքն և ի՛նչ էր անունն այդ դեռատի աղջկան։

«Վեց ամիսներ այսպէս բոլորած էին։

«Աշնան, կէս օրէ մը վերջ, պատուհանը բաց լինելով, տեսայ թխամազ վայելչագեղ օրիորդն որ դուրս կ'ուղղէր իւր հայեցուածքն, ինչ որ ցարդ չէր պատահած իրեն, և ներեցէք անմտութեանըս, կարծեցի թէ նա պատուհանէն դուրս խոնարհած էր, յատկապէս իմ գալուստս դիտելու համար ի հեռուստ։

«Այս գաղափարը զիս վեր ի վայր յուզեց։ Ուժաթափ եղած, չը կարողացայ յառաջանալ։

«Տեսէք, տեարք, թէ ո՛րպիսի տարօրինակ կերպիւ դէպքերը միմեանց կը յաջորդեն։ Մինչդեռ հրապարակին վրայ, կարծես գամուած կեցած էի, սրտատրոփ և յուզեալ, թաշկինակ մը որ առ եզերբ պատուհանին դրուած էր, փողոցն ինկաւ։

«Վազել, վեր առնուլ և զայն իւր տիրուհւոյն վերադարձնել մին պիտի լինէր աշխարհիս ամենէ հեշտ գործոց։

«Բայց այնպիսի կացութեան մէջ կը գտնուէի որ անկարելի էր քայլ մ'իսկ առնուլ դէպ յառաջ։

«Ծառայ մ'իսկոյն հասնելով կատարեց զայս դիւրին աշխատութիւն։ Իսկ ես՝ բոլորովին ամօթահար, մի քանի քայլ յետս ընկրկեցայ, յետոյ խոյս տուի երագընթաց։

«Միշտ ու միշտ կը մեղադրեմ զանձս, այնու զի եթէ այն վայրկենին առաւել համարձակ գտնուէի ո՞վ գիտէ ինչ կարէր պատահիլ։ Առանց որոշակի բան մ'ըսելու, կարելի էր որ իմ այս դոյզն ծառայութիւնս, եթէ երբեք ծառայութիւն կրնար համարիլ, թոյլ պիտի տար ինձ թերեւս յաճախել այդ գերդաստանն և... այնքան անհաւատալի դէպքեր կը պատահին այս աշխարհիս մէջ—մինչ իսկ մի երիտասարդ տեղակալի։

«Վերջապէս գեղեցիկ առիթ մը պիտի լինէր ինձ յարաբերութեան մտնելու այդ ընտանեաց հետ։

«Եւ կին մը բնաւ անտարբեր չը մնար այն անձին նկատմամբ որ ամէն պարագայի մէջ կ'ուզէ իրեն հաճելի երեւիլ... կա՛մ կ'անարգէ զնա եւ կամ կը սիրէ։

«Գեղեցիկ սեռին հետ պէտք է յանդուգն լինիլ և չը փախչիլ բնաւ, եթէ ծիծաղելի երեւիլ չուզէր մարդ։

«Սոյն թուականէն ի վեր առաւելապէս փորձառութիւն ունեցայ այս մասին։

* * *

«Երբ խիմանաք, տեարք, թէ ի՛նչպէս ուսայ անունն և ընկերութեան ո՛ր դասուն վերաբերիլն սոյն դեռափթիթ աղջկան զոր հակառակ անցեալ աւուր պարտութեանս և դուցէ սոյն պատճառաւ իսկ, լաւեւայն կը շարունակէի պաշտել, պիտի խոստովանիք անշուշտ թէ գիպուածը նորօրինակ դիւակի մը դերը կը վարէ երբեմն։

«Մի քանի զբաղմունք ստիպած էին զիս Մասլէնի հրապարակն երթալ. Երբ գործս լմնցուցի, մեքենաբար Ռուայալ փողոցը պիտի մտնէի երբ ուշադրութիւնս գրաւեց բազմութիւն մը որ խռնուած էր եկեղեցւոյն մանդակապատին առաջ, յորմէ մի քիչ հեռի տան կառքերու անվերջանալի շարք մը կ'սպասէր։

«Ընթերցողդ պակասութեանց մին է այն որ կը կատարուի անդ, պատասխանեցին յամենուստ իմ հարցմանցս. Իշխան մը որ դքսուհւոյ մը դուստրը կնութեան կ'առնու. այդպիսի հանդէսներ յաճախ տեղի չեն ունենար։

«Կարի հետաքրքրեալ, անմիջապէս եկեղեցւոյն սանդուղէն վեր ելայ. եկեղեցպանն, ում մի նուէր շնորհեցի, կարծելով անշուշտ թէ հրաւիրեալ մ'եմ, յարգանօք ողջունեց զիս և օգնեց ինձ ճամբայ կտրել ընդ մէջ շնորհալից ամբոխին որ հանդիսատես կայր հարսանեաց օրհնութեան։ Ըստ իմ խնդրանաց, նա ցոյց տուաւ ինձ մի ընտիր վայր, յորմէ, առանց խափանման, կարողացայ ամեն ինչ դիտել։

«Մի վայրկեան հարսն սլիտակազգեաց իմ կողմս դարձաւ։

«Ես քարացեալ մնացի։ Նոյն ինքն էր... կրցաք գուշակել թէ ով։

«Կը խոստովանիմ թէ բուռն աղէտ մ'էր սա ինձ համար։ Առ իս հրաւիրեցի բոլոր զօրութիւնս հարցնելու համար քովս կեցող անձին անունն սոյն ազնուատոհմ հարսին։ Եւ այն օրէն ի վեր է որ թաքուն կը պահեմ նորա անունն իմ այս հէգ սրտին մէջ։

«Ծիշդն ըսած էին. ատուգիւ նա կը պատկանէր դքսական մի գերդաստանի և սոյն ամուսնութեամբ իշխանուհի կը լինէր։

«Զգիտեմ կամ առաւել ճիշդը խօսելու համար չատ լաւ գիտեմ թէ է՞ր հեռացայ եկեղեցիէն ճմլեալ սրտիւ և յուսահատ։

«Քիչ ժամանակ վերջ, կը խնդրէի որ զիս Ափրիկէ ղրկեն և այս խնդիրս կատարուեցաւ։

«Ահա այս օրինակ հեռացայ հայրենի գաւառէս Ալժէրի գնալու համար։

* * *

«Սօլֆերինոյի ճակատամարտին հարիւրապետի աստիճանը կը կրէի։ Սոյն տեխուր և պանծալի աւուրց մէջ որոց միջոցին իւրաքանչիւր ճշմարիտ գաղղիացի զօրական արժանապէս կատարեց զիւր պարտականութիւն, բարեբաղդութիւն ունեցայ գերմանական գնդակէ մը վիրաւորուելու։

«Արագ ակնարկ մը արձկենք, տեարք, սոյն տառապագին եղելութեանց վրայ և մտնենք մի հիւրամեծար գեղեկի մէջ զոր իւր տնակալք, այր ու կին, ազնուականաբար հիւանդանոցի փոխած էին անդ ընդունելու համար զնոսա որք կը տանջուէին թշնամի հրոյ խայթուածէն։

«Հոն էր որ փոխադրեցին զիս արիւնթաթախ և տենդասրուռ։

«Մի քանի օր չարունակ, առաւել մերձ կայի մահու քան կենդանութեան, բայց շնորհիւ առողջ կազմութեանս, և շնորհիւ մանաւանդ այն հոգատար խնամոց զորս կը շռայլէին ինձ, տակաւ առ տակաւ կ'սթափէի և առողջութիւնս վերստին կը գտնէի։

«Երբ յետ ցաւոց և անգիտակցութեան երկար ժամերու զառաջինն բացի իմ աչեր, սնարին մօտ գտայ այն չքնաղ կինն որ զառանցութեանցս մէջ գթութեան քոյր մ'եղած էր ինձ, հրաշալի պահապան հրեշտակութեան գիշերներուս, նա որ տուած էր արբենալ երբ ծարաւ էի, նա որ վէրքս պատած էր և աղօթած բժշկութեանս համար։

«Վա՜մ անձնուրացութիւն։ Նոյն ինքն գղեկուհին էր այն և, անմոռանալի դիպուած, այս գղեկուհին, պիտի հաւատա՞ք միթէ, այս գղեկուհին այն մանկամարդ օրիորդն էր ամուսնացեալ ի Մասլէն։ Միշտ նա, նա որ պատկերը մինչ Ափրիկէ հետեւած էր ինձ, նա՝ որ յիշատակն անբաժան էր յինէն պատերազմի դաշտին վերայ, նա՝ որ ստուերն հիւանդութեանս զառանցանացը մէջ կ'երեւէր ինձ. մի՛շտ և մի՛շտ նա։

«Երկինքն է որ անգամ մ'եւս իմ ճամբուս վրայ կը թողու զնա, կը խորհէի, փակելով աչերս, գոգցես ապահովցնելու համար զինքս թէ ոչ եւս էի յերազի։

«—Ի՞նչպէս էք այսօր, զօրականդ իմ, մրմնջեց իւր հնչուն և պաղպաջուն ձայնիւն որ կը նմանէր երաժշտութեան ամենէ ներդաշնակին։

«Զլատասխանեցի։ Բռնեցի իւր ձեռքն և մերմիս շրթանց տարի զայն։

«Արտասուաթոր աչացս մէջ նա կարէր ընթեռնուլ այն խորին երախտագիտութիւնը զոր կ'ունէի սոյն վայրկեանէն սիսեալ։

«Ո՛հ, պարոնայք, քանի՜ցն երջանիկ պիտի լինէի մեռանիլ յայնժամ, քանզի բոլորովին նորա մօտ պիտի մեռնէի, հուպ իրեն և աչերս նորա վրայ յառելով։

* * *

«Երկար և տառապագին եղաւ ապաքինումս։

«Ի՞նչպէս պիտի կարողանամ ձեզ նկարել այն պատուասիրումը զոր ընդունեցայ գղեկին մէջ։ Զորս հազարապետներ էինք անդ, ամենքս ալ հիւանդ, նմանապէս տասն և ութ զինուորներ անդ կ'ընդունէին ստոնատերանց անխտիր խնամները։

«Իւրաքանչիւր ոք գոհ էր և անշուշտ այդ իսկ էր պատճառ որ ամենքս ալ բըժշկուեցանք։

«Արդեօք ըստ դասակարգութեան ընկերակիցներէս աւելի մեծ լինելուս համա՞ր էր որ իշխանուհին առաւել կ'զբաղէր ինձմով քան այլովք։

«Կարելի է։

«Սա միայն միշտ ստոյգ է թէ եթէ մինչ յայնժամ մեծապէս սիրած էի զնա, այժմ առաւել եւս ջերմ սիրով կը փարէի նմա։

«Ցաճախ նա կը նստէր անկողնոյս մօտ եւ կ'ընթեռնուր ինձ, անհուն գորովով մի չէշտիւ, մի քանիսն ժողովրդային այն առասպելախառն զրուցից որք կը պարունակեն միամտութիւն եւ հրապոյր եւ որք իւր բերնին մէջ հիանալի հոլովերգութեանց կը փոխուէին։

«Ցայնժամ, ամբողջ ժամեր, չէի գարձներ աչերս իւր երեսէն եւ կը մնայի անդ որպէս խորասուզեալ մտայ յափշտակութեամբ։

«Իրաւի երջանիկ էի այսպէս։

* * *

«Երկու ամիս վերջ առանց անճանաչելի կը քալէի եւ փոքրիկ պտոյտներ կ'ընէի իմ սենեակիս մէջ։

«Կ'օգնէր ինձ իւր բազկով եւ կ'զրօսնուր ի տես իմ անյաջողութեան, յորժամ մանկանց պէս կը փորձէի հաւասարակշռութիւնս պահել եւ առաւել արագօրէն մի քանի քայլ առնուլ։

«Նա չէր ճանչցած զիս. արեգակն թխացուցած էր զիմ գոյն եւ իմ պեխերս երբեմն համարձակօրէն վեր բարձրացած, կ'ինկնային այժմ մելամաղձոտ եւ կ'անջատէին ի միմեանց շրթանցս կից մասերը։

«Երկար ժամանակ, ի վեր նա մոռցած էր զիս, եթէ երբեք զիս ճանչցած էր։ Աւելորդ կը դատէի պատմել նմա թէ ինձ ծանօթ էր այն տանէն յորում աղջիկ էր, և բաց աստի ի՞նչ բանի պիտի ծառայէր այս։

«Զուարթագին կը խօսակցէի նորա հետ ամէն նիւթի վրայ, բայց երբ կ'ուզէի սիրոյ վրայ խօսիլ, կ'զգայի թէ և ոչ մի ձայն պիտի կարենար շրթներէս արտաքս ելնել։

«Եւ սակայն կը բաղձայի փոքր ինչ զննել իւր սիրտն և իմանալ թէ ի՛նչ կ'անցնէր անդ։

* * *

«Էհ, կեանքն ալ զարմանալի բան է։ Նա բոլորովին իմ մօտ կը նստէր անտարբեր և հաւանօրէն չէր տարակուսեր թէ կը տոչորէի, թէ կը մեռնէի միտքըս իրեն բացատրելու տենչանօք։

«Կը յիշեմ թէ միանգամ, հզօր ջանքեր ի գործ դնելէ գկնի, յաջողեցայ հետեւեալ հարցումն ուղղել նմա զոր նա պարտէր ակնկալել, այնու զի ճշդիւ դեռ նոր լրացուցած էր յուզիչ և գրաւիչ մի պատմութեան բարձրաձայն ընթերցումն։

«—Եւ դուք, տիկին, ի՞նչ կարծիք ունիք սիրոյ վրայ։

«—Ինձ համար, զօրական, սէրը՝ աշխարհիս ամենէ նուիրական բանն է, սըրբազնութիւն մ'է անոր զգացումն։

«Էհ ուրեմն, տեարք, մ'թէ չպիտի՞ կարէի օգտուիլ սոյն պատասխանէն, այս առթիւ ճշմարտութիւնը խոստովանելու համար նմա։ Մի գուցէ բոլորովին զայրացեալ նա խոյս պիտի տար յինէն, բայց իմ գոհունակութիւնս անսահման պիտի լինէր յայտնած լինելով թէ կը սիրէի զինքը։

«Երկիւղ կ'զգայի։ Լռութիւն պահեցի։ Եւ բաց աստի չը կամեցայ ապերախտ երեւիլ և բարիք մը նախատինքով վճարել։

* * *

«Երբեմն այլանդակ խորհուրդներ կ'ոռոճայի։

«Կ'ըսէի իւրովի, թէ իշխանն սպանելով չի՞ պիտի յաջողէի միթէ տիրանալ նորա կնոջ։

«Բարեբաղդաբար օգայն խորհուրդներ էին դոքա։ Ինքզինքս զսպեցի և հազիւ թէ ապաքինումս գտայ ուղեցի պաշտօնիս գլուխն անցնիլ։

«Ֆրանսան, իմ հայրենի երկիրս, պէտք ունէր ինձ, նախ անոր կը պատկանէի և յետոյ կնոջս։

* * *

Պատմիչը կանգ առաւ։

Իւր աչերն ունայնութեան մէջ տարածուեցան գոգցես անդ որոնելու համար մի բան... անշուշտ երջանկութիւն մը յաւէտ կորուսեալ։

Ցետոյ շարունակեց.

«Տասն երկու ամիս առաջ ի Բարիզ վերադարձայ, բացակայութենէ մը վերջ զոր անվերջանալի կը կարծէի։ Կը կրէի համազգեստ և զօրապետի պատուոյ աստիճանը։

«Արդարացի հպարտութեամբ, տեարք, պատերազմական նախարարութեան այս նոր պաշտօնիս գլուխն անցայ։

«Միանգամայն անգամ եղայ Ճոգէյ-Քլիւպի։

«Պատասխանեցի այն ամէն հրաւէրներուն զորս կ'ընդունէի, մեծ փութով կը յաճախէի յընկերութիւնս։

«Հոս է ուր կը յանդի սիրային պատմութեանս վերաբերեալ վերջին դէպքը։

«Ցորմէ հետէ հեռացած էի գղեկէն, առիթ չէի ունեցած տեսնել զիշխանուհին, բայց եւ այնպէս նոր տարւոյ առթիւ կանոնաւորապէս կ'օգտուէի պարագայէն գըրելու և մատուցանելու համար նմա, ինչպէս նաեւ իշխանին, իմ ջերմ բարեմաղթութիւններս։

«Միշտ առաջին սուրհանդակով կ'ընդունէի փոխադարձ սիրալիր երկտող մը ի շնորհակալութիւն իմ մտադրութեան։

«Անցեալ ձմեռ, ազնուատոհմ այրի տիկնոջ մը կողմանէ պատրաստուած մի պերճաշուք երեկոյթի միջոցին—չեմ կամիր առաւել ճշդել—պաշտելի տեսիլք մ'երեւցաւ աչացս։

«Հաւանօրէն վերջինն էր սա և վերջինը պիտի լինի։ Բնակարանին ծխարանին մէջ բազում գլխանգիտաց հետ չուրջ մի ժամ չարունակ խօսակցելէ զկնի, գաղափարացս նուազ խիստ ուղղութիւն մը տալու նպատակաւ, անցայ միւս բազմակը մտնելով պարարահ կը դիմէի։ Անդ հասնելու համար հարկ էր անցնիլ տեսակ մը ներքնասենեակէ որ պարագային առթիւ բնիկ և ոստրաշխարհեայ բոյսերով զարդարուն պարտիզի մը փոխուած էր։

«Անդ յանկարծ երկար տարիներ յետս տեղափոխուիլ զգացի զանձս, երբ յեղակարծումն գալարեաց միջեւ, աչացս առջեւ պատկերացաւ այն չնաշխարհիկ օրի որդն այնպէս որպէս ճանչցած էի զնա, դեռափթթոյ եւ թխամազ, նստած իւր գոց պատուհանին ետեւ այն ընդարձակ եւ ազնուապետական ապարանքին մէջ որուն առջեւէն սովորաբար կ'անցնէի ամէն օր երբ տեղակալ էի։

«Բոլորովին սպիտակազգեաց, պարզ զամեկլիա մը մխած իւր սեւ վարսից մէջ, ծաղիկ մ'էր սա ծաղկանց մէջ եւ սաստիկ սիրով կը հայէի նմա։

«Զարմացման չարժում մ'ըրաւ նա։ Իւր թաշկինակն, այր մէկ ծայրը միայն թեթեւ իմն օրինակաւ կը գտնուէր իւր լանջապանակին մէջ, գետին ինկաւ։

«Ցայնժամ բոլորովին երիտասարդական աւիւնով, նետուեցայ եւ վերուցի զայն։

«Ահա՛ ձեր թաշկինակը, օրիորդ, ըսի, մատուցանելով զայն նմա։ Երբ նորա անուշայոյր հոտը ճաշակեցի, յիշեցէք թէ երիտասարդութիւնը կը գալարէր նմայ փութանակի որպէս այս հոտը։

«Շնորհակալ եմ, զօրավար, պիտի յիշեմ զայդ պատասխանեց և հեռացաւ։

«Գիտէ՞ք, պարոնայք, թէ ո՛վ էր այդ նազելամեայ օրիորդը։ Կրտսեր քոյրն էր այն իշխանուհւոյն։ Երեսուն տարի առաջ, համարձակած չէի վեր վերցնել թաշկինակ մը առանց քաջութիւն ունենալու, անոր մօտենալ, եւ թերեւս նոյն իսկ այս էր որ երբեմն փողոցն ինկած էր։ Ափսո՛ս չատ ուշ էր։

«Այժմ ա՛լ չատ ուշ էր։

* * *

«Արդ, տեարք, գուշակեցէք այժմ թէ ի՞նչու պատմեցի զայս ձեզ։ Ճիշդը խօսելով, կ'ուզեմ որ դուք երիտասարդք որ ունկն դրիք իմ պատմութեան, չապրիք առանց խոհալի, կը բաղձամ որ ամենայն կենակցութեան նիւթական, մարմնական և վզայական կողմը չը հետապօտէք, այլ նաեւ զգայուն եւ վերածեալ կողմը եւս, այսինքն անչօշափելի եւ եբանաւէտ կողմը։

«Աստ աշխարհիս մէջ, ամեն ոք իղձ մ'ունի, նպատակ մը դէպ յոր կը ձգտին բոլոր իւր ջանքերը, փափաք մը որ կ'առաջնորդէ զնա եւ կը տիրէ իւր վրայ։

«Ամէն ոք կ'երազէ և պարտի երազել մի բան որպէս զի իր կեանքը կատարելապէս լրացած լինի։

«Արուեստագէտը կ'երազէ մի գլուխ գործոց որ զինքն անմահ կացուցանէ, զինւորը կ'երազէ մի յաղթանակ փառաւոր, գիտունն մի գիւտ մեծայաղթ, աշխատաւորը մի հարստութիւն անհատնում։

«Ամէն որք առաւել կամ նուազ կը ծառայէ խօլական ցնորից։

«Իմ ցնորամտութիւնս եղած է սէրը. նա միշտ կանգուն պահած է զիս, չէ հեռացած յինէն—սէրն որ կրից ազնուագոյնն և սրբագոյնն է երբ չի խորթանար երբեք, սէրը՝ զոր կը խրատեմ ձեզ, տեարք, նկատել որպէս մի կրօն, որպէս մի հաւատ, և ոչ որպէս մի պարզ ցանկութիւն։»

* * *

Զօրապետը լռեց։

Թեթեւ իմն գդուեց իւր սպիտակ պեխերը, մինչդեռ մենք ամենքս լուռ ակնապիշ կը հայէինք նմա։ Այս անձը կարի յոյժ տենչանօք սիրած լինելու էր այսպէս խօսելու համար։

ԺՕԶԷՖ

Թարգ. Մ. Թ.

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ
1889
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Սեփականութիւն
Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցի
ԳԻՆ 40 ՓԱՐԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ (ԱՐԱՄԵԱՆ)

Կը գտնուի Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան գրասենեակը, Կ. Պոլիս Մեծ-Նոր-Խան, միջնայարկ, թիւ 48, 49, 50, և բոլոր Հայ գրոց վաճառատեղ քով։

Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքը չկրօղ օրինակները վաւերական չեն։ 2128

ՏՕԲՐԼՕՒ ՏԱՍՈՒՐ

ՄԱՍՆԱԳԷՏ կոկորդի, ականջի, քիթի, բերանի և փոքի ամէն տեսակ հիւանդութեանց, Վ. ԿԱՅՍԱՐ. փորիդի, Լ. ծնողական Ինծիւթիւնական մասնագէտ գասատուներէ, ՏՕՔՏՕՐ ՏԱՍՈՒՐ երբեւէ հիւանդութեանց մէջ ունեցած պատուաւոր համբաւ, Եւրոպաչրջիկ վերադարձած լինելով, իւր ընդունարանն հաստատած է ի Մեծ Փողոց Բերայի, թիւ 447 տունը, կից Առաքելոյ Պետականատան, ուր ամեն օր կ'ընդունի իւրին զոմներն առաւօտեան ժամ 9էն մինչեւ կէսօր և կիրակիներէ զատ ամեն օր ժամ 2էն մինչեւ 5 (ալ. ժ.) Պոլսոյ կողմը, կամուրջի գլխոյ Քիւչիւք-եան գեղարանն, ուր չորեքշաբթի օրերը ձրի կը գործէ։ 7179

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՅՔ ԹԷՅԻ
ԷՄ. ՊԱՂԱՊԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԱԾՈՒՄՆ

Ջինաստանէն, Հնդկաստանէն եւ Ճաբոնէն

12 — Գալաթա, Ճէլալ պէյ Խան, — 12

Նշանաւոր ԵՋԻՒԲԻՏԻ վաճառատուն քովն

ՆԵՐԱԾՈՒՄՆ—ԱՐՏԱԾՈՒՄՆ

Քանի տարիէ ի վեր թէյի մեծածախն առեւտուր ընելով, զանազան գործերու մէջ բոլորին է Պատրաստուած, բազմաթիւ անձանց խնդրանաց վըրայ որոշեցինք քաղաքիս մէջ Թէյի կեդրոնական վաճառատուն մ'հաստատել «Մեծածախու» եւ «Փոքրածախու» վաճառանաց համար։ Վաճառականք, գէղեցիկութեամբ, նպաստաւորութեամբ եւ բնաւորութիւնն, որք վերահաս ձ բան զատուելոց իրենց պաշտպը կը պատրաստեն, եւ անոնք որ կ'ուզեն ոչ միայն լաւ, հապա նաեւ էժան թէյ ունենալ, կը հրաւիրուին այցելել «Թէյի մեծ մթերանոցներն» եւ գոհ պիտի մնան։ 2187

Տուփերուն վրայ պահանջել Էմ. Պաղապանի եւ Ընկ. ստորագրութիւնն եւ Աւետարանի պատկերը։

ՓԱՂՏԱՏԵՂԻ ԴՐԱՏՈՒՆ

ԱՂՕԹԱԳԻՐՔ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՓՈՔՐԱԴԻՐ

ԸՍՏ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԳԻՆ, ԱԶՆԻՒ ԼԱԹԱԿԱԶՄ 3 ԴԱՀ.
ՆՈՅՆ ԸՆՏԻՐ ՈՍԿԵԶՕԾ 4 ԴԱՀ.

174 երեսներէ բաղկացեալ այս Աղօթագիրքը կը պարունակէ առաւօտու, ի ժամու Ս. Պատարագի եւ ի գիշերի բոլոր աղօթքներն, զորս կը զարդարեն 52 պատկերներ պատշաճապէս յարմարցուած։ 2050

ԿԱՂԱՆԴԻ ԱՌԹԻՒ

ԺԱՄԱՑՈՅՑՔ ՑՈՅԺ ՃԱՇԱԿԱՒՈՐ ՇՂԹԱՆԵՐ ԵՒ ՆՈՐԱՁԵՒ
ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐ

ԿԱՏԱՐԵԱԼ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՈՍԿԻՈՅ

ԱՖԹՈՓՕՌՆԵՐ ԱԶԶԱԶԱՆՑԵԼՔ

Երաշխաւորեալ 15 տարւոյ համար

Դիմել առ Աելմոնեան Լֆէնտի, ի Մանսուր-փաշա թիւ 244. ուր կը գտնուի նաեւ 45 դրուշի անձրեւանոցի վրայ կրքէլ՝ ինչպէս նաեւ ապօրինակ ամեն գներով ոսկի և արծաթ խիստ սիրուն ժամացոյցներ։

2266 9—12

ՊԱՐԻ ԴԱՍ

ՍՄԲԱՏ ԷՖ. ՔԷՍԷՃԵԱՆ յառաջիկայ 1889 յունվար 3 ին պիտի վերսկսի իւր պարի դասերը երեքշաբթի եւ հինգշաբթի գիշերներն, ժամ $2\frac{1}{2}$ էն սկսեալ, յիւր տունն, Գում-գաբու, Մօլլա Թաշը ճամբէսի թիւ 13։ Վերոյիշեալ օրերէն զատ, պատրաստ է տանց մէջ երթալ դասախօսութեան.—Դիւրին և արագ մէթոտ եւ չափաւոր պայմաններ։ 2327

ՍԳՕԴԻ ՄՕՐՒԻ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ

Միլան, 26 սեպտեմբեր 1885

Պարոնայք Սգոդ և Պոուն,

Սգոդի օշարակը գործածութեան մէջ սատ չնաներ զինքը բաղկացնող նիւթերուն առաւելութիւնները։ Կ'երեւի իսկ թէ երենց խառնուրդը, թո՛ղ որ երկուքն ալ աւելի ախորժահամ կ'ընէ, կ'աւելցնէ նաեւ անոնց կազդուրիչ յատկութիւնները։

Այս պատրաստութիւնը լաւ տեղ մը գրաւելու սահմանեալ է մանկանց հիւանդութեանց մէջ։

ՏՐ. ԿԱԼԴԱՆՕ ՍՏՐԱՄՊԻՕ

AUX VILLES DE FRANCE

Ժ. ՏԸԼՈՐՄ-Ժաքիւր Պ. ՄԷՅՅԻՒ

ԲԵՐԱ—394, Մեծ Փողոց Բերայի,—394 ԲԵՐԱ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանել ձեզ թէ յառաջիկայ Մարտ 3/15ին, վարձակալութեան լրանալուն պատճառաւ և ինքզինքս բոլորովին նուիրելու համար Դողմապիյի Մանիֆաթուրի Փողոցի թիւ 3 վաճառատանս յաջողութեան, որոշած եմ ջնջել Բերայի վաճառատունս։

Որովհետեւ կարեւոր ձեռքէ հանել այդ Մանիֆաթուրէն մէջ եղած ապրանաց ահագին մթերքը.

Դեկտեմբեր 5/17էն մինչեւ Յունուար 1/13 պիտի կազմակերպեմ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԵՐՈՎ ՎԱՃԱՌՈՒՄ մը ամէն տեսակ կօշիկներէ ապրանքներու, ինչպէս

Շաքարի ամանք, Բօակք, Ալպաքաօնք, Ժամացոյցք, Պղնձեայ արձաններ, Բիւրեղեայ ամաններ, Փոքր կարասիք, Պէպէքներ, Մեռելներու յատուկ առարկայներ, Լուսամփոփի շրջանակներ, Հողմահարք, Ժամգիրք, Ալպոմք, Պատկերներ, եւայլն եւն. եւն.։

Բոլոր գիներն նշանակուած են պլուշով։ — ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆ. — Օմ. ռուպին 108 դրուշէն։

Ժ. ՏԸԼՈՐՄ ՅԱՋՈՐԴ Պ. ՄԷՅՅԻՒ
394, Մեծ Փողոց Բերայի

ԴԻՆ. — Իւրաքանչիւր գնորդ պիտի ստանայ վաճառականութեան երի տոմսակ մը, որուն քաժիններն ի տես պիտի գրուին։ 2277 17—25

Արտօնատէր Ա. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

AU PANTHEON
ԴԱՆԺՕՐՆԻԼՕ ԵՂԲԱՐՔ

Բերա Մեծ Փողոց Կալաթա Սէրայի մեծ դրան դէմ թիւ 206

Դանժօրնիլօ եղբարք պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ, ձմրան եղանակին համար, Բարիզէ բերել տուած են շքեղագեղասքի համար մեծաքանակ գեղեցիկ կերպասներ, ինչպէս նաեւ տղոց պարզ զգեստներ համար բրդէ ամեն տեսակ կոստիւմներ, Բոլերոններ, Կոլեռներ, Բոլեկներ, Նորաձեւ Նոր ձեւեր եւայլն։

Բոլոր այս ապրանքներն, որք վերջին նորաձեւութեանց կը համապատասխանեն և ընտիր տեսակէ են, խիստ աժան գներով կը վաճառուին։

Հարսանեաց օժիտ պատրաստող ընտանիքներ մեծապէս պիտի օգտուին եթէ այցելեն Դանժօրնիլօ եղբարց վաճառատունը գիւնէն։ 2267 14—20

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

531

ՆՈՐԹՀ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,243,127
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՒՈՅ 1,932,350

ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,421,200
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՒՈՅ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար վճռենք ներկայացնել, նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուած վնասնին 15,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԹԱՅՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիոն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ **ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ** Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց

ԿԱՐԴԱՑԷ՛Ք ԵՒ ՅԻՇԵՑԷ՛Ք

Եթէ կ'ուզէք ընտիր և լաւ տեսակէ ապրանքներ ունենալ, դիմեցէք ի վաճառատունն

ԷՏՄԸՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ
(Հիմնեալ 1854ին)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԱԻՆԳՕՆԸ ՄԹԸՐՏԸՆՈՅ ի Թողոյ քաղաքին, որ խիստ չափաւոր գնով ամենալաւ ապրանքներ միայն կը վաճառէ։

Ամէն չափի ու ձևի ապրանքներ [illegible] րնտիր, Բէյ, կօշիկ, [illegible]

Գ. Գարուանա [illegible]

Պէյօղլու, [illegible]

ԷՏՄԸՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԸՐԱՆՈՑ
95 և 97, [illegible] 2171

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

SOUTH BRITISH AND NATIONAL ՍԱՈՒԹՀ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՆԷՇԸՆԸԼ

Ստորագրեալ դրամագլուխ	4,000,000	Անգլ. ոսկի
Պահեստի »	500,000	» »
1873էն ի վեր վճրլ. կորուստք	2,500,000	» »

GLASGOW & LONDON ԿԼԱՍԿՕՅ ԷՆՏ ԼԸՆՏԸՆ

Դրամագլուխ 300,000 Անգլիական ոսկի

Թուրքիոյ համար ընդհանուր գործակալք ՀՕՖՄԱՆ ՆԷՊԱՐՔ ԵՒ ԸՆԿ.
(1880) Պոլիս, Սուլթան Համամ, Սաքըզ խան, թիւ 13, 14, 15

ՔԱՈՒՉՈՒԷ ՄՈՒՃԱԿՆԵՐ

(ԼԱՍԹԻՔ ԳԱԼՕՇ)

NORTH BRITISH RUBBER Cº EDINBURGH

NORTH BRITISH RUBBER Cº LIMITED TRADE MARK EDINBURGH

Անգլիոյ Էտինպուրկ քաղաքի հռչակաւոր Նորթհ Պրիթիշ Րապըր և ընկերութեան գործարանին մէջ պատրաստուած։

Ցայտնի է թէ ժամանակէ մը ի վեր մայրաքաղաքիս մէջ ամենադէշ տեսակէն քաուչուէ մուճակներ կը վաճառուին, զորս ամէն ոք ստիպուած է գնել ձմեռուան եղանակին վրայ հասնելուն պատճառաւ։ Այդ քաուչուէ մուճակներն եթէ գնով իսկ աժան լինին, խիստ յոռի տեսակէն լինելով մէկ քանի օրէն անգործածելի կը դառնան։

Անգլիոյ Նորթհ Պրիթիշ Րապըր և ընկերութեան գործարանն աշխարհիս ամենէն գերազանցն է քաուչուէ մուճակներու պատրաստութեան համար։ Իւր արտադրութիւնք խիստ դիմացկուն են ու վայելուչ և բուն իսկ քաուչուէ շինուած։ Նաւական է այս գործարանի լասթիքներէն մէկ զոյգ միայն գնել, փոխանակ միւս գործարաններու արտադրութիւններէն երկու զոյգ գնելու։ Այն ընդունելութիւնը զոր նոյն գործարանի քաուչուէ լասթիքները գտած են մայրաքաղաքիս մէջ, բաւական ապացոյց մ'է նոյնոյ գերազանցութեան։ Այս լասթիքներու խարդախանքներն երևան եկած լինելով հարկ է ուշադրութիւն ընել որ իւրաքանչիւր լասթիքի դուրսի կողմը դրոշմուած [illegible] ներսի կողմը ալ կնիք մը։ Իսկ յիշեալ նշաններուն առևր «Նորթմարք»ի [illegible]։

Այս լասթիքներ կը գտնուին ի Ղալաթիա Չարշըքաբու թիւ 5 Տիամանդի Նորճիատէսի, ի Պոլիս Սուլթան Համամ թիւ 47 և 49 Սերոբէ Տէմիրճեանի վաճառատանց մէջ և բոլոր քաուչուէ լասթիք ծախողներու քով։ 2190

ՀԱԶՄԱՏՈՐԻՆ

Ի ՊԱՅՑՈՒԼ ՀԱՌՋ
ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕՔՈՒՇՈՒ Կ. ՊՈԼ ԻՍ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Սոյն կազմատան մէջ կան Եւրոպական նորընտիր և կատարելագործեալ մեքենաներ որոնցմով կը կազմուին և կը յօրինուին

ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ

ԳԻՐՔԵՐ գեղեցիկ և հաստատուն
ՏՈՒՄԱՐՆԵՐ, վաճառականական ևն
ԱՑՑԵՏՈՄՍՆԵՐ, խիստ մաքուր և ընտիր։

Ցաճախորդաց դիւրութեան համար կազմատունը ունի իրեն կցորդ վաճառատուն մը թիւ 27 Ֆինճանճըլար-Եօգուշը, ուր կ'ընդունուին յանձնարարութիւնք և ուր կը վաճառուին նաեւ գրագրական ամեն տեսակ պիտոյք, ընտիր թուղթ գրիչ ամուարք, պայուսակ, գրապանակ ևն ևն։

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տոքթոր Այէրի ջերմային հիւանդութեանց այս դեղն որ անխառն բաղադրութիւն մի է զուտ բուսեղինաց, է դառնահամ և սղդու կազդուրիչ ամեն տեսակ ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու ջերմոտ կլիմայից վատ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնը և ապաքինիչ զօրութիւնը երաշխաւորեալ է նորա անհամար արդեանցը ստոյգ գիտութեամբն։ Այս ֆիզիքական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անըմբռնելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մանեն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորումն, որոց աս անուններն տըր-ուած են. ջերմն և սարսուռ, թաքուն ջերմ, պարբերական ջերմն, ընդհատեալ ջերմն, մաղձային տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտը ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ճախճախուտ վայրերէ, նուրեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և ականներու ծակերէն ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղն կը ջնջէ այդ թունաւոր նիւթոց կամ կազերու ազդեցութիւնը և դուրս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւնն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտն ստոյգ, միայն թէ տրուած հրահանգից համեմատ գործածուի։ Կը ծախուի Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 581

ԽԱՐԻՍԽ

ԿԵՆԱՑ, ԵՆԱՄՏԻՑ ԵՒ ՕԺՏԻՑ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ի ՎԻԷՆՆԱ

Գործողութիւք 1888 Սեպտ. ամսուն

Այս ամսուան մէջ ստացուած և ստորագրուած 608 նոր մուրհակներ (փոլիս) որք կը կազմեն ապահովագրեալ դրամագլուխ,

	Ֆր.	3,272,410
Բաժիններու գանձումն	»	37,750
Վճարուին մահուանց ամիսի	»	142,302
1888 դեկտ. 31ին երաշխաւորեալ հասոյթ	Ֆր.	86,699,959·12
Ամբողջութիւն ապահովագրեալ գումարաց	Ֆր.	408 448 921·35

Տեղեկութեանց համար դիմել առ ընդհանուր Գործակալատան Պ. ԼԱՆԵԼ ՊԱՆՏԻ

Թիւնէլի հրապարակ, տունն Մայէրի, երկրորդ յարկ. 1820

Ընկերութեան ներկայացուցիչն է Գ. Ս. ԱՏԼԷՐ

La Compagnie d'Assurences La Mannheim
ET
La Compagnie de Ré-Assurances de Mannheim

ՄԱՆՀԱՅՄ

ԸՆԴԴԷՄ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԻՑ

Ամբողջ դրամագլուխ	12,500,000 ֆրանք
Պահեստի »	2,825,000 ֆրանք

[illegible]

[illegible] La Mannheim Cº d'Assurances et la Cie de Ré-Assurances de Mannheim [illegible] 30,500,000 ֆրանք։

[illegible]

Գիները շատ չափաւոր են և պայմանները շատ դիւրին։

[illegible]

Տ. ԼԷՖԼԷ ԵՒ ՎԻՔԹԷՐ ԱՊԻԹ

1132 Ընդհանուր Գործակալութ[illegible] Կ. Պոլիս [illegible]


Coleman's
Liebig's
Extract of
MEAT & MALT
WINE
HUNDREDS OF TESTIMONIALS HAVE BEEN RECEIVED FROM MEDICAL MEN.

ԳՕԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ հեշտահամ և կազդուրիչ ըմպելի մ'է, բաղկացեալ Բորդոյի գինիէ, Լիէպիկի մսի հիւթէ և Մալթի հիւթէ, կազմելով այսպէս մնացածող, զօրաւոր և դիւրամարս խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ տկար մարդոց համար լաւ է հաւասարապէս։

Բժշկական համբաւաւորութեան հասած է նմա և բազմաթիւ նշանաւոր բժիշկներէ յանձնարարեալ է։ ՀԱԶԱՐԻ ԱՒԵԼԻ ԲԺԻՇԿ գրած են իրենց վկայութիւններն։ Ահա կը թարգմանենք վկայութիւնն տողքերը

Թ. ՐԸՃԻՆԱԼՏ ՃԱՒՍԻ, Մ. Ր. Ս. Ս. Լ. Լ. Մ. Ք. Ս. Ր. Ճ. ԵՒ ԸՆԿ.

26, Լորն Րոտ և 24 Համիլթըն Սգուէյր

Պրայթըն, 2 սեպտեմբեր 1888

Պարոնայք — Ի նկատ առնելով խորդուխ միջման մը համար դաւնցած լուրերը, կը փափաքիմ յայտնակէս դրուցել ձեզ թէ որչափ գոհ եմ ձեր Մսի և Մալթի պատրաստութենէն. Քանի քանի անգամներ տեսած եմ անոր առողջարար ազդեցութիւնն այն հիւանդութեանց վրայ որոց համար պատուիրած եմ զայն, և ինչ ինչ պարագայից մէջ ձեզ բերած եմ հրաշալի արդիւնքներ զորս պարզ գինին (առանց մսոյի) չպիտի կրնար տալ։

Ընդունեցէք, և այլն և այլն
Թ. ՐԸՃԻՆԱԼՏ ՃՕՆՍԸ

Ի վերջոյ, մայրաքաղաքիս գլխաւոր բժիշկք ջերմագին յանձնարարած են զայն։

Հարցնել ԳՕԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ Լիէպիկի մսի և Մալթի խառնուրդով, զգուշանալ կեղծերէն։

Գինեվաճառներ, սուրճագրեր, միակ գործակալ ի Թուրքիա Գոլմէնի և ընկերութեան գործարանին Ս. Ճօրճ Նորուիչ և Լոնտոն։

ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԸՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահականոցին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի
Թոմթոմէյիթ թիւ 95 և 97, Ղալաթիա 2170

Յ. ՍԵՐՈՎԲԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԻԼԻԱ

Կ'ընդունին ամեն տեսակ առաքման և ներածութեան ապրանաց յանձնարարութիւններ որք կը գործադրուին շահաւէտ կերպով և նպաստաւոր պայմաններով. հասցէ O. Séropian & Cie Marseille. հեռագրոյ համար, Séropian Marseille. 1834

ՎԱՆ ՀՈՒԴԷՆԻ ԶՈՒՏ ՔԱՔԱՕՆ

Ընդհանրապէս ճանչցուած է քաքաօներուն ամենէն անսրժահամն և լաւագոյնը։

Ի նկատ առնելով իւր ընտիր տեսակը, ՎԱՆ ՀՈՒԴԷՆԻ ԶՈՒՏ ՔԱՔԱՕՆ, թէպէտ ըստ երևոյթին աւելի սուղ, իրօք աւելի աժան քան այսօրինակ ուրիշ պատրաստութիւններ, այնպէս որ ՎԱՆ ՀՈՒԴԷՆԻ ԶՈՒՏ ՔԱՔԱՕՒ մէկ բաժակը բաժակ մը թէյէ կամ խահուէէ աւելի չարժէր. այլ որովհետեւ այս քաքաօն գերազանցապէս սննդարար և դիւրամարս ըմպելի մ'է, իւր ծախսն իրօք շատ աւելի նուազ է։

Կը գտնուի մեծ դեղավաճառաց, նպարավաճառաց և անուշարարաց քով, թիթեղեայ տուփերու մէջ ½, ¼ և ⅛ քիլոկրամ։ 1806

ՖՐԱՆՔՕ–ՀՕՆԿՐՈՒԱԶ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԻՆՍԹԻՏԱՒԼԷՄԻՆ

ՀԱՆԴԵՐՁ ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹԵԱՄԲ

Ամբողջական դրամագլուխ	20,000,000
Գանձեալ »	10,000,000
Կանխիկ արկածից դէմ պահեստ	12,000,000

Արևելից Տնօրէն. Մ. Լէօպէն Բօրպոռ
» փոխտնօրէն և քննիչ. Մ. Նազարէթ Նազըճեան

ԹՈՒՐՔԻՈՅ ԳԼԽԱՒՈՐ ԳԱՂՈՒԹԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Տեարք Պալեօղեան և Պալըքճեան Զմիւռնիա. Գասպարեան և Տավլամեան Ադանա. Գ. և Ս. Սեմեան Հալէպ. Բ. Շէրէֆեանին և Տէրունեան Ատալիա և Սպարթա. Սիմէօն Տէյիրմէնճի օղլու Բօնեա, ևն ևն։

Ֆրանքօ–Հունգարական կենաց անանուն ընկերութիւնը խիստ դիւրամատչելի պայմաններով ամեն տեսակ ապահովագրութիւններ կ'ընդունի, նոյնպէս փոքր տղոցը և աղջկանց ի չափահասութեան փոխարէն ալ։

[illegible]

Աւելի մանրամասն և կարևոր տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել առ վարչութիւն։ Ամեն յօդուած յայտարարութիւնը ձրի կը տրուի։

Գոհութեամբ կը ծանուցանենք յարգոյ հասարակութեան թէ, ընկերութեանս 1885 յունվար 1էն մինչ 1886 տարւոյն յունվար 1ի ընդհանուր գործողութեանց հաշուեցուցակին, (Վիեննայի Աւստրիա-Հունգարական կառավարութեան թերթին հրատարակած) պահեստի գումարին վրայ 2 միլիոն ֆրանքի պատկառելի գումար մը յաւելում դոյացած է, որով անցեալ տարւոյն 10 միլիոն պահեստի գումարը ներկայիս 12 միլիոն է։ 654

ՄՕՐԹԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

ԱՐԵԱՆ ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ, Նաք, Վէրք, Ուռեցք, Ցաւք, Կապուտ հազ, Շնչարգելութիւն, Ստամոքսի ցաւ, Պիղծութիւն, Անարիւնութիւն բոլորովին կը բուժին ի ձեռն ROB LECHAUXի ԽՕՏԵՐՈՒ ՀԻՒԹՆԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

Գիբէսոն եւ կարմիր Սալթարէյլ եւ Բոմատ Անդի-Տարգռէօզ Լըշօ

Կեղծերէն զգուշանալու համար, բոլոր շիշերուն վրայ պահանջել ԽԻՆԻՕՆ ՏԸ ՖԱՊՐԻՔԱՆ կապոյտ կնիքը կրող երաշխաւորութեան երիզն և այս ստորագրութիւնը

ՁՐԻԱԲԱՐ կը ղրկուի հետաքրքրաշարժ տետրակ մը (35 րդ տպագրութիւն) ՌՈԲ ԼԸՇՕԻ միջոցաւ արեան վերանորոգման վրայ։

ՊԱՀԵՍՏ—Դեղարան ՄԱՐԻՕ ԼԸՇՕ, Սէնդ-Քաթերին փողոց, 164—ՊԱՀԵՍՏ ի Կ. Պոլսոյ մէջ կեդրոնատեղին են Տեարք Քի չիւքեան եղբարք, Բերա և Պոլիս, Քասաբեան, 13, Պահչէ-Գափու. Պ. Կ. Վինտիճիանօ և ընկ. 14, Սուլթան Համամ փողոց։ Ի Բերա Քանզըլը եղբարք, Մեծ փողոց, 247. Ն. Թէոտորիտէս, Մեծ փողոց, 244. Լօժէն Տէլլասուտա, Մեծ փողոց, 318։ 1697

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԴԵՂՕՐԷԻՑ

Ժ. ԱԼԷՔԵԱՆ

ՄԱՏԱԿԱՐԱՐ ՕՍՄԱՆԵԱՆ ԾՈՎԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Նորոգ տարի ի վեր վաճառատունս փոխադրած եմ Եէնի Ճամիէն Պահչէ Գաբուս ձեռաց ալ Խանի առ՝ թիւ 2 մեծ խանութը։ Սոյն միջոցին մէջ վաճառատունս իւր դասաւորութեան մէջ առաջին կարգի և ամենաճոխ վաճառատուն մը ընելու համար ամեն ջանք եւ ծախք գործելէն չեմ խնայած։ Դիմողք խիստ գոհ պիտի մնան վաճառած մաքրութենէն եւ գներու չափաւորութենէն։ Կը գտնուի Գաղղիոյ, Անգլիոյ եւ Գերմանիոյ հռչակաւոր տանց դեղօրայք, մեծ քանակութեամբ Լօմպառտոյի եւ Բէյնէթիյէի սիւլֆաթ տը քինին, Նորվեկիոյ զուտ ձկան իւղ, Գաղղիական եւ Անգլիական ալ ամենայն դեղօրայք (Spécialité), վիրաբուժաց համար բժշկական գործիքներ, որք իրենց տեսակին չատութեամբ բոլոր Պոլսոյ մէջ գտնուածները կը գերազանցեն, ախտաբժշկներու եւ կլիստորլասթիի համար պէտք եղած գործիքներ եւ դեղեր, Քօնիաքի համբաւաւոր տանց քոնեաքներ, Պորտոյի եւ Մալակայի գինիներ, մեծ քանակութեամբ Եւրոպական հանքային ջուրեր, Հիւանդներու համար նիւթեր եւ անթիւ տեսակ վիրաբուժական քաուչուէ վերաբերեալ ամեն տեսակ դործիք, դեղարանաց մէջ գործածելի պիտոյք, պարապ շիշեր որք մեծ քանակութեամբ կը ծախուին, Հակախտական (Anticeptique)ի միջոցով պատրաստուած Լիսթէրի բամպակներ, եւ նոյն եւ այլն։

Ամեն կողմէ յանձնարարութիւնք կ'ընդունուին եւ ուղղակի կը ղրկուին։ Մեծ հոգ եւ խնամք կը տարուի հետեւելու անցեր երթալիք ապրանաց ընտրողման, ինչպէս յաճախորդք ալ փորձով տեսած են։

Վաճառատանս մէջ կը գտնուի Եւրոպայէն յատկապէս բերուած ծառոց պատուաստի համար պատրաստ խէժ (մոմ) որ մեծ ծառայութիւն կ'ընծայէ պարտիզպանաց եւ պարտիզատիրաց։ 1669

ՍԳՕԴԻ ՕՇԱՐԱԿ

(EMULSION SCOTT)

ՄՈՐՈՒ ՁԿԱՆ ՁՈՒԹ ԻՒՂ
Իբբօ-Ֆօսֆիդ ու շօժ և ասոտայով
Պատրաստեալ ձեռամբ ՍԳՕԴԻ և ՊՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք

Կաթին չափ ախորժահամ է

Մորու ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, հիփօֆօսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց Ոսկրացաւութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։ Գործակալարք են Համմէր և Հիրշէլ, Պոլիս։ 1691

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԻ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

1686

1888 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

Վոսփորէն իջնող շոգենաւներ

2 15 Վանիքէ. Չէնկէլ. Պէյլէր. Գուզգ. Գասպմ.
2 15 Պէյք. Բաշլգ. Զուգ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտ. Վանիքէ. Չէնկէլ. Պէյ. Գուզ.
2 15 Արնավ. Գուրուչ. Օրթագ. Պէշիք.
2 15 Եէնիմ. Մէզ. Պէօյիւք. Թար. Եէնիք. Ըմէն. Միրկ. Ր. Հիսար Պէպէք Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիքթաշ
3 15 Ր. Ա. Գավագ Մէզպ. Պէօյտ. Թարպ. Պէյգօզ Բաշպ. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզգ. Խուկ.
3 15 Եէնիմ. Մէզարպ. Պէօյիւքտէրէ Թարապ. Եէնիք. Միրկ. Ր. Հիսար Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթա. Պէշիք.
3 35 Չէնկէլ. Պէյլէրպ. Գուզգ. Խուկ.
4 45 Եէնիմ. Մէզպ. Պէօյիւք. Թարպ. Եէնիք. Ըմէն. Միրկ. Պօյաճ. Ր. Հիսար Պէպէք Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիքթաշ
5 — Պէյգօզ. Բաշպ. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզգ. Պէշիք.
6 15 Եէնիմ. Մէզարպ. Պէօյիւքտ. Թար. Եէնիք. Ըմէն. Միրկ. Պօյաճ. Ր. Հիսար Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիքթաշ
7 — Եէնիմ Մէզարպ, Պէօյիւք. Թարապ. Պէյգ. Բաշպ. Եէնիք. Միրկ. Գանլըճ. Ր. Ա. Հիսար Գանտի. Արնավ. Չէնկէլ. Պէյլ. Օրթ. Գուզգ. Պէշիք. Խուկ.
8 30 Ա. Գավ. Մէզարպ Պէյիւք. Թարապ. Եէնիք. Ըմէնիա Միրկեօն Ր. Հիսար Պէպէք. Արնվ. Գուրուչ. Օրթագ. Պէշիկ.
9 — Պէօյիւք. Թարպ. Պէյգօզ. Բաշպ. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզգ. Խուկ.
10 — Մէզպ. Պէօյիւքտ. Թարպ. Եէնիք. Միրկ. Ր. Հիսար Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիք.

Կամուրջէն ելնող շոգենաւներ

3 — Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ր. Հիսար Միրկ. Եէնիք. Թարպ. Պէօյիւ. Մէզպ. Եէնմ.
3 35 Խուկ. Գուզգ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Զուպ. Բաշպ. Պէյգօզ
3 45 Գասպմ. Խուկ. Պէշիք. Գուզգ. Օրթ. Պէյլ. Չէնկէլք. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար Գանլըճ. Միրկ. Եէնիք. Բաշպ. Պէյգ. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Եէնիմ.
4 30 Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ր. Հիսար Պօյաճ. Ըմէն. Եէնիք. Թարպ. Պէօյիւք. Մէզպ. Եէնիմ.
5 30 Գասպմ. Խուկ. Պէշիք. Գուզգ. Օրթագ. Պէյլ. Չէնկ. Արնավ Պէպէք Գանտ. Ա. Ր. Հիսար Գանլ. Միրկ. Եէնիք. Պէյգօզ Թարպ. Պէօյ. Մէզարպ. Ր. և Ա. Գավագ
7 — Պէշիք. Խուկ. Գուզկունճ. Օրթագ. Պէյլէր. Չէնկէլ. Արնավ. Գանտլ. Ա. և Ր. Հիսար Միրկ. Եէնիք. Թարպ. Պէօյիւքտ.
8 30 Պէշիք. Օրթ. Գուր. Արնավ. Պէպէք Ր. Հիսար Միրկ. Եէն. Թար. Պէօյ. Մէզ.
9 30 Պէշիք. Գուզգ. Օրթ. Պէյլպ. Չէնկ. Արնվ. Պէպէք
10 5 Գասպ. Գուզգ. Պէյլէր. Չէնկ. Վան. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Զուպուգլը Բաշպ. Պէյգ. Թար. Մէզ. Ր. և Ա. Գավագ.
10 15 Պէշիք. Օրթագ. Գուրուչ. Արնավ. Պէպէք Ր. Հիսար Պօյաճ. Ըմէն. Եէնիք. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Եէնիմ.
11 — Պէշիք. Օրթագ. Գուրուչ. Արնավ. Պէպէք Ր. Հիսար Միրկեօն Եէնիք. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Եէնիմ.
11 — Գուզգ. Պէյլէր. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Զուպ. Բաշպ. Պէյգ.
11 30 Պէշիք. Գուզգ. Օրթ. Պէյլէր. Չէնկ. Վանիք.
12 — Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք